



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԹՈՐԵԱԼ ՋՈՒՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՒ ԱՆՄՇԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՈՌՈԳՄԱՆ ՍԱՐՏԱՀՐԱՒԵՐԻ ԱՈԱԶ

ՏՕԳՔ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Հայաստան Համահայկական Հիմնադրամը այս տարի, 25 Նոյեմբեր 2010-ին, համայն հայութեան կրկնակայանայեցական նշանակություն ունեցող մարտահրաւերով մը: Այդ մարտահրաւերը կը բացայայտէ հերոսական Արցախ աշխարհի ծայրամասերուն ծուարած, այլապէս մոռացութեան տրուած, կենցաղային իմաստով տարրական կարիքներէ գրկուած մեծ թիւով չճանաչուած գիւղերու միջնադարեան իրավիճակէն դուրս բերելու, անոնց կեանքի պայմանները բարելաւելու անհրաժեշտութիւնը:

Համաձայն Հայաստան Համահայկական Հիմնադրամի լոյս ընծայած հաղորդագրութիւններուն՝ Արցախի սահմանային շրջաններուն վրայ նստած են երկու հարիւր գիւղեր անլի քան եօթանասուն հազար բնակիչներով, որոնք կ'ապրին միջին դարը յիշեցնող խղճալի պայմաններու մէջ: Անոնց կեանքի պայմանները, որոշակիօրէն, ոչ միայն կը խոչընդոտեն դոյզ կարգի յառաջխաղացք, այլ նաեւ, կ'առաջնորդեն դէպի ինքնամեկուսացում, ինքնաբնակում, որոնք իրենց բացատրութիւնը կը գտնեն ապրուստի դժուարութեան հետեւանով, այդ հայրենական շրջաններէն մի անգամ ընդմիջու հեռացման մէջ: Գիւղերը կը պարպուին, եւ անոնց վերաբնակեցումը կը դառնայ հիմնական խնդիր:

Անդրադառնալով այդ երկու հարիւր գիւղերու դիմագրուած ամենօրեայ դժուարութիւններուն մասին, Հայաստան Համահայկական Հիմնադրամը դիտել կու տայ, թէ անոնց անլի քան եօթանասուն հազար հաշուող բնակիչները գրկուած են խմելի մաքուր ջուրէ: Զուրը թորեալ չէ եւ կը պարունակէ մանրէներ: Այդ շրջաններէն ներս գոյութիւն ունեցող հիւանդութիւններու գլխաւոր պատճառը, ուրտուն առ հարիւր տոկոսով այդ չմաքուած ջուրն է: Այնուամենայնիւ, իրենց առօրեայ խմելի ջուրին ապահովման նախապահիւն, ընտանիք մը ջուրի աղբիւրը երբայլու համար պարտաւոր է օրական երկու քմէր մը միջոցով նախապահելու: Դիտել կը տրուի միաժամանակ, թէ ընտանիք մը իր կեանքին քառասուն տոկոսը կը յատկացնէ խմելի ջուրը կրելու նախապահիւն վրայ:

Խմելի ջուրի ապահովման մշտական այլ սպառիչ յոգնութեան

Շաբ.ը էջ 19

ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԵԹԵ ՄԵՉ ՊԱՐՏԱԴՐԵՆ, ԱՊԱ ԱՅՍ ԱՆԳԱՍ ՄԵՐ ՀԱՐՈՒԱԾԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ԵՒ ՎԵՐՋԻՆԸ»

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան Նոյեմբեր 12-ին, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարներուն հետ միասին ներկայ գտնուած է ԼՂՀ Պաշտպանութեան բանակի գործարժուութիւններուն: Այս առթիւ Սերժ Սարգսեան յայտարարած է. «Հայկական կողմը չի պատրաստուած նախարարական լինել, բայց անհրաժեշտութեան դէպքում հակահարուածը վերջնական կը լինի»:

Զօրավարժութիւնները, որոնք տեղի ունեցած են Ադտամի մօտակայքը, ըստ Սերժ Սարգսեանի պատասխանն են սահմանի միւս կողմէն հնչող սպառնալիքներուն: «Զօրավարժութիւնները, որ առաւելագոյնս մօտ էին մարտական իրադարձութեանը, պէտք է զգուշացում լինի ուրիշների համար՝ եթէ հանկարծ գայ ժամը, մենք կարողանալու ենք ոչ թէ կրկնել

այն, ինչ տեղի ունեցաւ 92-94 թուականներին, այլ մենք վերջնականապէս ինդիքը լուծելու ենք, վերջնականապէս հարցը փակուելու է», - յայտարարած է ան ուսուցողացած, որ պիտի ձեռնարկուին բոլոր քայլերը՝ սահմանները անստիկ պահելու ու հայ գիւղերի կեանքը անվտանգ պահելու համար:

«Որովհետեւ շարունակուած են սադրանքները, որովհետեւ շարունակուած են կրակոցները, զորուած են մարդիկ, ու ոչ բոլորն են պատշաճ ուշադրութեան արժանացնում Ադրբեջանի այսպիսի պահուածքը», - ընդգծած է Սարգսեան:

Յայտնենք, որ մի քանի օր առաջ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւը հանդէս եկած էր հերթական յայտարարութիւնով, հայկական կողմին սպառնալով պատերազմով եւ ատրպեյճանական բա-

նակի «մարտունակութեամբ»: Ան ընդգծած էր, որ Ատրպեյճան ամէն բան կ'ընէ Հայաստանը աշխարհէն մեկուսացնելու համար: «Հայաստան այժմ աշխարհագրական փակուղի է», - յայտարարած էր Ալիեւ: Այս առնչութեամբ, Սերժ Սարգսեանն ըսած է. «Մենք երբեք չենք ցանկացել պատերազմ, մենք այն ժամանակ ուղղակի պարտադրուած էինք պաշտպանելու մեր հայրենիքը, հիմա էլ մենք երբեք նախարարական չենք կարող լինել, բայց եթէ պահը գայ, եթէ մեզ պարտադրեն, ապա այս անգամ մեր հարուածը պէտք է լինի կործանարար եւ վերջինը»:

Հայաստանի եւ Ատրպեյճանի դեկլարներու փոխադարձ սպառնալիքներուն առնչութեամբ, քաղաքագետ Դաւիթ Յովհաննիսեան այն կարծիքին է, որ Լեռնային

Շաբ.ը էջ 4

ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ԿԸ ՊՆԴԵ ՈՐ, ԹՈՒՐՔԻՈՅ ՀԵՏ ՆՈՐ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԿԱՆ

Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան Նոյեմբեր 17-ին Խորհրդարանէն ներս տեղի ունեցող հարց ու պատասխանի ժամանակ անդրադարձած է Թուրքիոյ նախագահի այն յայտարարութեան, թէ հայթրքական լուռ շփումները կը շարունակուին:

«Բազմաթիւ անգամ Թուրքական կողմը հնչեցրել է, մենք էլ բազմաթիւ անգամ մշտապէս պատասխանել ենք, որ նոր բանակցութիւններ Թուրքիայի հետ չեն վարուել եւ չեն վարուած», - յայտարարած է Էդուարդ Նալբանդեան:

«Եթէ Թուրքական կողմն անկեղծ է իր ցանկութեան մէջ՝ կարգաւորելու հայ-թուրքական շարքերութիւնները, ապա մի պարզ բան պէտք է անի՝ վաւերացնի եւ առանց նախապայմանների եւ այլեւայլի իրազործի այն Արձանագրութիւնները, որոնք պայմանաւորուած են երկու երկրների միջեւ ու ստորագրուած են», - ըսած է նախարարը:

ՀՀԿ-ական պատգամաւոր Գագիկ Մելիքեանի այն դիտարկման, թէ ըստ երեւոյթին, առանց նախապայմաններու յարաբերութիւնները կարգաւորելու մեր նախապայմանը անընդունելի է Թուրքիոյ համար, Էդուարդ Նալբանդեան պատասխանած է. «Եթէ դա անընդունելի է, ապա այս գործընթացը ոչ միայն առաջ չի գնաց, այլեւ ձախողման կ'ենթարկուի Թուրքիոյ պատճառով»:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 55-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՅԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ



Հայկազեանի 55րդ տարեդարձի «Կարկանդակի Հատուկ» Համալսարանի այժմու եւ նախկին նախագահներու մասնակցութեամբ ԳԵՈՐԳ ՔԵՏՇԿԵՐԵԱՆ

Պէլլուրի (Լիբանան) Հայկազեան Համալսարանը միակ հայկական համալսարանն է սփիւռքի տարածքին՝ որ վերջին 55 տարիներու ընթացքին բարձրագոյն ուսում ջամբած է ոչ միայն Մերձաւոր Արեւելքի զանազան երկրներէն դիմող հայ ուսանողներու, հապա նաեւ արաբ եւ օտար դպրոցական աշակերտներու: Անոնք հաւասարապէս օգտուած են այս հաստատութեան ընթացած մտային ու հոգեկան դաստիարակութենէն:

Հայկական Համալսարանի հիմնադրութեան շքեղ ու պանծալի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ, Ուրբաթ, 12 Նոյեմբեր 2010-ի երեկոյեան ժամը 7:00ին, Կլենտոնի Հիլթըն Պանդակի ընդարձակ ու շքեղօրէն զարդարուած հիւրասրահին մէջ՝ անլի քան 400 հանդի-

սականներու մասնակցութեամբ: Ներկաներուն մէջ կային մեծ թիւով անձնաւորութիւններ, որոնք եկած էին հեռաւոր Պէլլուրէն, Գանատային եւ Միացեալ Նահանգներու զանազան շրջաններէն: Իսկապէս բացառիկ եւ ուրախալի երեւոյթ մըն էր Համալսարանին նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեանի կողքին տեսնել հաստատութեան Հիմնադիր Նախագահ Վեր. Դոկտ. Ճան Մարգարեանը, եւ անոր յաջորդող երկու նախագահները, յանձինս Վեր. Դոկտ. Ժիլպէր Պիլիպիկեանի եւ Վեր. Դոկտ. Ճան Խանճեանի, որոնք դժուարին պայմաններու ներքեւ, ու մեծ նուիրումով ծառայեցին այս համալսարանին՝ նախանձելի վիճակի հասցնելով զայն:

Հանդիսականներուն մէջ ակնբախ էր ներկայութիւնը՝ շրջանիս

Շաբ.ը էջ 17

ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Դատելով ամեն ինչից՝ դարաբաղեան հարցում իրավիճակը լրջանում է: Ընդ որում, խօսքն ամենեւին էլ Աստանայում կայանալիք հանդիպման եւ այդ հանդիպման ընթացքում ինչ-որ համաձայնագրի ստորագրման հաւանականութեան մասին չէ: Իշխանութիւնները, բնականաբար, պիտի յայտարարեն, որ Աստանայում ոչինչ էլ տեղի չի ունենալու, անհանգստանալու կարիք չկայ, ընդդիմութիւնն իր հերթին պիտի կանխատեսի, որ Աստանայում ճակատագրական որոշումներ են ընդունուելու. եւ դա կարող է կործանարար լինել Հայաստանի համար եւ այլն: Այդ ամէնը հասկանալի է: Բայց անկախ այս ամենից՝ դարաբաղեան հարցում ինչ-որ բան իսկապէս այն չէ: Եւ այդ «ինչ-որ բանը» սկսուել է բոլորովին վերջերս՝ ընդամենը վերջին երկու-երեք շաբաթուայ ընթացքում: Ինչի՞ մասին է խօսքը: Նախ՝ Աստանայում տեղի է ունենում Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպումը, ընդ որում՝ խօսքն «ինքնաբերաբար» հանդիպման

նում են դարաբաղեան պատերազմի վերսկսման հաւանականութեան թէմային եւ անպայման նշում, որ եթէ պատերազմը վերսկսուի, Թուրքիան, իհարկէ, կը միջամտի դրան (հետեւաբար՝ Ռուսաստանը նոյնպէս ստիպուած կը լինի միջամտել): Հաճելի գրոյց է, չէ՞: Իսկ վճռական ճակատամարտից առաջ ո՞րն է հրամանատարի հիմնական խնդիրը: Ճիշդ է, շարքային զինուորի մարտական ոգին բարձր պահելը: Դրա համար էլ ե՛ւ Նիկոլայ Ռիժկովը (անուղղակիօրէն), ե՛ւ ռուսական լրատուամիջոցները (ուղղակիօրէն) փառաբանում են հայկական բանակի բարձր մարտունակութիւնը: Մի խօսքով, «արտաքին աշխարհը» մեզ կամաց-կամաց նախապատրաստում է պատերազմի: Արտաքին աշխարհը «Չանդամը», կարեւորն այն է, որ ռուսներն են մեզ նախապատրաստում այդ պատերազմին: Ընդ որում՝ նախապատրաստում են միայն բարոյապէս (հակառակ դէպքում ադրբեջանցիներին C-300 հրթիռային համակարգեր չէին վաճառի): Հիմա՝ աւելի կոնկրետ: Հայաստանի ժողովուրդը դարաբաղեան պատերազմի երկրորդ փուլին

Ինչպէ՞ս է հայ զինուորը կռուելու այն բանակում, որի գերագոյն-գլխաւոր հրամանատարը Սերժ Սարգսեանն է, որի անվտանգութեան խորհրդի քարտուղարը Արթուր Բաղդասարեանն է, եւ որի բանակի շտաբի պետը Եւրի Խաչատուրովն է

մասին է, որովհետեւ նախապէս այդ հանդիպման մասին ոեւէ մէկը տեղեկացուած չէր: Հանդիպումն ակնյայտօրէն ձախողում է, եւ կողմերը ստիպուած են լինում Ռուսաստանի դէմքը փրկելու համար գոնէ ինչ-որ փաստաթուղթ ստորագրել (սուեալ դէպքում՝ ռազմագերիների փոխանակման մասին): Անցնում է մի քանի օր, եւ ԱՊՀ գործադիր քարտուղարը յայտարարում է, թէ բա գիտէ՞ք, մենք (այսինքն՝ Ռուսաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը) քննարկում ենք օկուպացուած տարածքների վերադարձը, ու հետն էլ մտածում ենք, թէ ո՞նց անենք, որ Հայաստանի ու Ղարաբաղի միջեւ էլ միջանցք լինի, Ադրբեջանի ու Նախիջևանի միջեւ էլ: Հայաստանի իշխանութիւնները, բնականաբար, շուկի մէջ են. ոեւէ մէկն այս յայտարարութիւնը չի մեկնաբանում: Անցնում է եւս մի քանի օր, եւ Ռուսաստանի Դաշնային խորհրդի պատուիրակութիւնը ժամանում է Հայաստան: Այդ պատուիրակութեան ներկայացուցիչ Նիկոլայ Ռիժկովն էլ Երեւանում յայտարարում է, թէ դարաբաղեան հարցում «չատ առումներով հարցը մտնում է փակուղի, դա մենք գգում ենք, բայց թէ ինչպէս դուրս գալ այդ փակուղուց՝ չգիտենք»: Յետոյ էլ աւելացնում է, թէ «մենք գգում ենք, որ մեր եւ ձեր հարեւանները ձեռքները ծալած չեն նստում»: Յետոյ էլ, իր կարծիքով, հանգստացնում է մեզ՝ յայտարարելով, թէ «եթէ իրավիճակը վատանայ, մենք, բնականաբար, կը յայտնենք մեր տեսակէտը»: Զարմանալի գուզադիպութեամբ, նոյն օրը ռուսական ամենահեղինակաւոր լրատուամիջոցներն անդրադառ-

վում հոգեբանօրէն վաղուց է պատրաստ: Բոլորն էլ գիտեն, որ պատերազմի երկրորդ փուլն անխուսափելի է (եթէ չենք ցանկանում անընդունելի եւ անիմաստ զիջումների գնալ): Հարց է ծագում՝ իսկ ի՞նչ ակնկալիքներ ունենք մեր դաշնակիցներից: Պարզ ասած՝ «ռուսներից հասնում է» այնպէս անել, որ Թուրքիան չխառնուի. մնացածը մենք ինքներս կ'անենք: Բայց այստեղ էլ առնուազն երկու հարց է առաջանում: 1. Կարելի՞ է արդեօք վստահ լինել, որ Ռուսաստանն ի վիճակի է ապահովել Թուրքիայի (եւ որեւէ այլ երրորդ երկրի) ինքնուրուիւնը: 2. Ինչպէ՞ս է հայ զինուորը կռուելու այն բանակում, որի գերագոյն-գլխաւոր հրամանատարը (հեռու տնից-տեղից) Սերժ Սարգսեանն է, որի անվտանգութեան խորհրդի քարտուղարը Արթուր Բաղդասարեանն է, եւ որի բանակի շտաբի պետը (չատ հեռու տնից-տեղից) Եւրի Խաչատուրովն է: Լաւ, ենթադրենք՝ Ռուսաստանը կատարեց իր դաշնակցային պարտաւորութիւնները, ենթադրենք՝ Հայաստանի զինուած ուժերն իսկապէս ի վիճակի են հակառակորդին խաղաղութիւն պարտադրել (կասկածող ենք ման գալիս), բայց ա՛յս քաղաքական իրավիճակում: Այնպէս որ՝ պատերազմի նախապատրաստուել իսկապէս պէտք է: Միայն թէ՛ առաջին քայլը պիտի լինի բարձրագոյն հրամակագրող փոխելը: Եւ անպայման պէտք է սկսել գերագոյն-գլխաւոր հրամանատարից: Մնացած ամէն ինչը ճիշդ է:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹԻՒՆ»

ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲԱՅՔԱՅԻՈՒՄ Է

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Համակարգը, որ այնքան հոգատար ու երկար կառուցել է հայկական իշխանութիւնը, դարձել է սեղմօղակ նրա պարանոցին: Եւ իշխանութեանը, իր գոյութիւնը պահպանելու համար, ոչինչ չի մնում, քան հրաժարուել համակարգից: Երկար տարիներ Հայաստանում կառուցուել էր իշխանութեան բուրգը, որի հիմքն էին կոռուպցիան, քրէական աշխարհի հետ գործարքները, փողերի լուսցումը, բռնութիւնը, պաշտօնների, մենաշնորհների ու միջոցների քվոտաւորումը, ինչպէս նաեւ իրեն նման իշխանութիւնների հետ գործարքները: Համակարգը հասցուել էր գրեթէ կատարելութեան, սակայն ինչ որ պահի այն խափանուեց: Տարբեր կէտերում «կարճ միացումներ» են տեղի ունենում, եւ արդէն անխափան աշխատելու յոյս չկայ: Լուրջ խնդիրներ սկսեցին բանակում. Այնտեղ տիրող բարքերը դարձան հասարակութեան սեփականութիւնը, եւ կասկածի ենթարկուեց իշխանութեան կարողութիւնը՝ վերահսկել բանակի իրավիճակը: ձեռքբուած քննարկումն առաջացել իրաւապահ համակարգում՝ ոստիկանութեան ու դատախազութեան միջեւ բացայայտ հակասութիւնները բացայայտ են դարձել, ոստիկանութեան բաժանմունքում սպանութեան համար դատում են ոստիկանների: Կրթութեան համակարգը անգործունակ դուրս եկաւ՝ իշխանութիւնն ընդունեց, որ հայկական դպրոցը չի համապատասխանում համաշխարհային ստանդարտների, եւ Հայաստանին պէտք են իսկական, «էլիտար» դպրոցներ: Կոռուպցիան այնքան ակնյայտ է դարձել, որ միջազգային կառուցները վարկային ծրագրերի հետագայ իրականացումը կապում են երկրում կոռուպցիայի դէմ պայքարի հետ՝ մէկ հարկային, մէկ լեռնահանքարդիւնաբերութեան ոլորտում: Սակայն վերջին հարուածը հայկական զանազան յանցախմբերի բացայայտումն էր տարբեր երկրներում եւ իշխանութեան հետ դրանց կապերի մասին ակնարկները: Անսպասելի պարզուեց, որ համակարգը կառուցուել էր խախուտ հիմքի վրայ, եւ սկսել է փախչել ոտքի տակից: Իշխանութիւնը վախեցել է: Նա հասկացել է, որ համակարգը սպանում է իրեն, եւ ներկայումս փորձում է վերահաստել ինքզինքը: Բանակում ներկայումս ծառայող երիտասարդները պատմում են, որ վերջին կէս տարում կարգապահութիւնը բանակում բաւական բարելաւուել է: Ծառայելը բաւական հեշտացել է՝ նախ, գործառնելով ներկայ են ռազմական ոստիկանութեան ներկայացուցիչներ, ովքեր կարող են գործ յարուցել եւ ձերբակալել սպաներին, ովքեր նոյնիսկ կը հայհոյեն զինուորիներին: Բացի այդ, այն դէպքից յետոյ, երբ զինուորը մարտական դիրքերում գնդակահարել էր իր ծառայակիցներին, սպաներն աշխատում են չվիրաւորել մարտական գէնք կողմ զինուորիներին: Դա չի նշանակում, որ բանակում ամէն ինչ լաւ է, արմատախիլ են արուել բոլոր արատաւոր երեւոյթները, սակայն ակնյայտ է, որ համակարգը յայտնուել էր բուռնօրէն եզրին, եւ իշխա-

նութիւնը հասկացել է, որ եթէ այդպէս շարունակուի, առանձին «կարճ միացումները» կարող են անջատել ամբողջ համակարգը: Թերեւս, հենց դրանով են պայմանաւորուած առողջապահութեան նախարարի տեղակալների հրաժարականները: Ըստ ամենայնի, նախարար Քուչուկեանին նոյնպէս առաջարկուել է հրաժարական տալ, սակայն նրա թիկունքում Գագիկ Ծառուկեանն է, եւ նա չի ցանկանում, որ «վիրահատական գործողութեան» գոհ դառնան իր նախարարները: Երկրորդ «թոյլ օղակը» Սոցապահութեան հիմնադրամն է Վազգէն խաչիկեանի գլխաւորութեամբ, ով նոյնպէս համակարգի առողջացման «գոհն» է: Կասկած չկայ, որ ներկայումս իշխանութիւնն ամէն կերպ փորձելու է հեռաւորութիւն պահել յանցաւոր կապերից, գոհրաբերելով նախկին գործակիցներին: Չի բացառում, որ գոհների մէջ կը լինեն շուռ-աստղեր, որոնց միջոցով իրականացուել էր կապը: Զուր չէ, որ իշխանութիւնը Թաթարի հարցաբնութեանն ԱՄՆ-ում արձագանքեց շարագուշակ լուրթեամբ: Մի կողմից, լաւ է, որ համակարգը առողջանալու փորձեր է անում, սակայն, միւս կողմից, ակնյայտ է, որ իրեն լիովին վարկաբեկած համակարգին ոչ ոք չի հաւատում: Բոլորին պարզ է, թէ որտեղ են համակարգի արմատները, եւ բոլորը հասկանում են, որ այդ քայլերը իմիտացիոն բնոյթ ունեն:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԾԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
 Պեռ. (626) 797-7680
 Ֆաքս. (626) 797- 6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒ ՑՈՅՑԸ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆԻ



Հայաստանեան մամուլի խմբագիրները կը բողոքեն Նիկո Փաշինեանի դէմ կատարուող բռնութիւններուն դէմ

Հայաստանեան մի շարք լրատուամիջոցների խմբագիրներ ու ղեկավարներ, լրագրողներ Նոյեմբեր 16-ին բողոքի ակցիա անցկացրեցին Մարեանի արձանի մոտ՝ պահանջելով իշխանութիւններից ապահովել «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր, քաղաքապետի Նիկոլ Փաշինեանի անվտանգությունը:

Ակցիայի մասնակիցները ստորագրեցին յայտարարություն, որով իրենց վրդովմունքն են արտայայտում Փաշինեանի նկատմամբ «կոշ» ՔԿԶ-ում տեղի ունեցած յարձակման առնչությամբ՝ միաժամանակ պահանջելով իշխանութիւններից ապահովել Փաշինեանի կեանքի անձեռնմխելիությունը ու երաշխաւորել նրա անվտանգութիւնը: Մօտ 15 լրատուամիջոցների ներկայացուցիչներ ստորագրեցին յայտարարություն տակ:

Նիկոլ Փաշինեանի կիներ՝ «ՀԺ»-ն հրատարակող «Դարեակիցը» ՍՊԸ տնօրէն Աննա Յակոբեանը, նշեց, որ Փաշինեանին երեք պահանջ է ներկայացուել՝ ներման դիմում գրել, փակ ռեժիմով կրել պատիժը կամ դադարեցնել հրատարակչին գործունէութիւնը: «Ամէն կերպ, կարծում եմ, փորձում են խնդրագիր կորզել կամ լուծեն», - ասաց Աննա Յակոբեանը:

Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի նախագահ Աշոտ Մեղիքեանը նկատեց, որ «որոշակի ուժերի կողմից Փաշինեանին լուծեցնելու նպատակ է հետապնդւում: Դա ակնյայտ է»: Ըստ Մեղիքեանի՝ «ՀԺ» գլխավոր խմբագրի

նկատմամբ կատարուած յարձակումը մարդու իրաւունքների, առաջին հերթին՝ ազատ արտայայտուելու իրաւունքի ոտնահարում է: «Դա իսկապէս նմանում է պլանատրուած եւ մշակուած գործողութիւնների», - նշեց նա:

«Իշխանութիւններն իրենց հաշուարկներում մի բան հաշուի չեն առել, որ Նիկոլի հետ ամէն ինչ կարելի է անել, բաց նրան չեն կարող լուծեն», - լրագրողների հետ զրոյցում ասաց «Հետք» թերթի խմբագիր Էդիկ Բաղդասարեանը: Ըստ նրա՝ Փաշինեանի դէմ յարձակման նպատակը նրան լուծեն է: Ինչ վերաբերում է այն խօսակցութիւններին, որ Փաշինեանի դէմ յարձակման պատճառը խցակիցների հետ նրա ունեցած տարաձայնութիւններն են, Էդիկ Բաղդասարեանն ասաց. «Ես գիտեմ դատապարտեալների վերաբերմունքը լրագրողների նկատմամբ, նրանք չեն ցանկանայ լրագրողների հետ խնդիր ունենալ»:

«Հրատարակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արմինէ Օհանեանն իր գործընկերներին տեղեկացրեց, որ առաջարկուել է յայտարարութեան տեքստում աւելացնել նաեւ Փաշինեանին ազատ արձակելու պահանջը, ինչին ներկաները դրական արձագանքեցին:

Ակցիայի մասնակիցները Նիկոլ Փաշինեանի լուսանկարները պարզած պահեցին մի քանի րոպէ: Նրանք պարզել էին նաեւ «Կեցցէ Ազատութիւնը, կեցցեն մեր երեխաները, որ ապրելու են Ազատ եւ Երջանիկ Հայաստանում» գրությունները ցուցապատաւ:

«ԺԱՌԱՆՎՈՒԹԻՒՆ» ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՄԱՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՅԵԼԸ

Աժ «Ժառանգութիւն» խմբակցութիւնն անընդունելի է համարում հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած Արձանագրութիւնները Ազգային ժողովի մեծ օրակարգում պահելը: Այս մասին Խորհրդարանի նիստի ժամանակ յայտարարեց «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանը:

«Աժ մեծ օրակարգի առաջին բաժինը մեզ համար անընդունելի է, քանի որ պահանջում է հայ-թուրքական Արձանագրութիւնները: «Ժառանգութիւնը» շարունակում է մնալ այն կարծիքին,

որ պէտք է ստորագրութիւնը հետ վերցնել Արձանագրութիւնների տակից», - յայտարարեց Արմէն Մարտիրոսեանը:

Միաժամանակ նա յիշեցրեց, որ թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլը նախորդ շաբաթ ChatSam House-ից մրցանակ է ստացել, ինչի ժամանակ շեշտուել է, որ նա է հայ-թուրքական յարաբերութիւնների նախաձեռնողը: Ըստ պատգամաւորի՝ սա եւս հիմք է տալիս, որ պէսզի հայկական իշխանութիւնները հետ վերցնեն Արձանագրութիւններից իրենց ստորագրութիւնը:

Այլուհանդերձ, Աժ մեծ օրակարգի

«ԿԸ ՅԱՂԹԻ ՆԱ, ՈՎ ԿԸ ԿԵՂԾԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Հայաստանում ոչ մի ներքին վերադասաւորում չի եղել, ներքաղաքական դաշտը իր որակը չի փոխել: Այս տեսակէտին է Լեւոնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մեղիքեանը:

Նրա խօսքով՝ ինչպէս միշտ կայ իշխանութիւն, կայ ընդդիմութիւն, հիմնականում՝ ի դէմս ՀԱԿ-ի:

ՀՀԿ պատգամաւոր Համլետ Յարութիւնեանի հետ բանավէճի ժամանակ Մեղիքեանը նշեց, որ այս իրավիճակը ձեւաւորուեց նախագահական ընտրութիւններից յետոյ եւ հանգեցրեց հասարակութեան բեւեռացման:

Սակայն, ըստ Մեղիքեանի, հասարակութեան մեծամասնութիւնը չի հաւատում ոչ իշխանութեանը, ոչ ընդդիմութեանը:

«Քանի որ ներքաղաքական վիճակը չի փոխուել, յաջորդ ընտրութիւնները կը կեղծուեն, իսկ շահող կը լինի այն ուժը, որը կը կարողանայ կեղծել ընտրութիւնները: Այդ լծակները իշխանութիւնների ձեռքում է», - ասաց նա՝ միաժամանակ նշելով, որ իշխանութիւնն անում է ամէն ինչ, որպէսզի փողոցային բախումների հաւանականութիւնը գրոյցական լինի:

«Մենք ունենք տրոհուած հասարակութիւն: Այս ճգնաժամը պէտք է լուծուի», - ասաց Մեղիքեանը:

Համլետ Յարութիւնեանը չհամաձայնեց Մեղիքեանի տեսակէտներին:

«Կատեգորիկ դէմ եմ: Բեւեռացում Հայաստանում բացարձակապէս գոյութիւն չունի», - ասաց նա՝ յաւելելով, որ հասարակութեան տրոհման պատճառը սոցիալական վիճակն է:

Միաժամանակ նա նշեց, որ «կայ օբիեկտիւ իշխանութիւն եւ պայքարող ընդդիմութիւն»:

Խօսելով սպասուող խորհրդարանական ընտրութիւնների մասին՝ հանրապետական պատգամաւորը նշեց, որ կը յաղթի կազմակերպուած այն քաղաքական ուժը, որը անցած տարիներին աշխատել է ժողովրդի հետ, ինչ-որ չափով նպաստել է տարբեր խնդիրների լուծմանը:

«Ես բախտագուշակութեամբ չեմ գբաղւում, բախտագուշակութիւնը շնորհալի աշխատանք է, ես վերապահում եմ ինձ դրանից: Ես ի՞նչ իմանամ՝ ով ինչքան կը հաւաքի», - ասաց նա՝ յաւելելով, որ ՀՀԿ-ի շանսերը պէտք է ժողովուրդը գնահատի:

«ՆԱԻՐԻՏ»-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՅԱՆՁՈՒՄ ԵՆ ՉՈՐՍ ԱՄՍՈՒԱՅ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ



«Նաիրիտ» գործարանի աշխատակիցներու ցոյցը Հայաստանի նախագահի նստավայրի մօտ

Երեւանի «Նաիրիտ» գործարանի հարիւրաւոր աշխատակիցները Նոյեմբեր 12-ին գործարանից երթով հասան Հայաստանի նախագահի նստավայր՝ պահանջելով վճարել չորս ամսուայ աշխատավարձը:

Ցուցարարների պատուիրակութեան ու «Նաիրիտ»-ի տնօրէնի հետ անցկացուած քննարկումից յետոյ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարէն Կարապետեանը խոստացաւ, որ «խնդիրները կը կարգաւորուեն»:

«Պարտաւորեցնում ենք, որպէսզի ձեր հարցերը արագ կարգաւորուեն», - ցուցարարներին վստահեցրեց Կարապետեանը՝ յաւելելով, որ գործարանի տնօրէնը «չատ լուրջ քննադատութեան է ենթարկուել, որ գործարանը հասցրել է այս վիճակին»:

«Նաիրիտ»-ի տնօրէն Վահան Մելքոնեանը յայտնեց, թէ կոնկրետ ինչ է որոշուել. - «Առաջիկայ մէկ

շաբաթուայ ընթացքում վճարել մէկ ամսուայ աշխատավարձի գծով պարտքը ամբողջութեամբ եւ այդ մէկ ամսուայ ընթացքում որոշել գործարանի հեռանկարը՝ գործարկել կամ վերակառուցման անցնելը»:

Բողոքող բանուորներին, բացի աշխատավարձից, յուզում է նաեւ գործարանի ապագան:

«Եթէ դրական որոշումը կայացուի յաջորդ շաբաթուայ ընթացքում այն մարմնում, որտեղ այն պէտք է կայացուի, մենք յուսով ենք, որ ղեկատեմբերի 1-ից հրամանը կ'արձակենք գործարկելու: Դա կը նշանակի, որ գործարանը կը մտնի աշխատանքի մէջ Փետրուարի 1-ից», - ցուցարարներին ասաց Վահան Մելքոնեանը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Մեղքոնեանը ասաց. - «Եթէ ես չկարողացայ կատարել նախագահի յանձնարարութիւնը, ես պէտք է տամ հրաժարական»:

Դրուեց քուէարկութեան եւ ընդունուեց 86 «կողմ» ձայնով:

ԼՈՒՐԵՐ

«ԷԿՈՆՈՄԻՍՏԸ» ԶՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԶԱՅԱՍՏԱՆԻՆ ԿԵՐԱԲԵՐՈՂ ԶԵՐԹԱԿԱՆ ԶԵԿՈՅՑԸ

Քաղաքական ոլորտում «Էկոնոմիստ»-ի վերլուծաբանները փաստում են, որ «Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի դիրքերը այժմ առաւել ապահով են թուում. տնտեսական իրավիճակը բարելավուել է անցեալ տարի գրանցած 14.4 տոկոսանոց անկումից յետոյ»:

«Լեւոն Տէր-Պետրոսեանի ղեկավարած ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի նարարուութիւնները կառավարութեան երկարակեցութեանը վտանգելու կամ նշանակալի փոփոխութիւնների հասնելու համար ներկայումս մեծ չեն: Չնայած 2010 թուականի Մարտին ՀԱԿ-ը հանրահաւաք կազմակերպեց 2008 թուականի մարտեան դէպքերի գոհերի իշխատակին, դա չվերաճեց կառավարութեան կամ իշխանութիւնների դէմ բողոքի ցույցի: ՀԱԿ-ը համախմբուած միասնական քաղաքական ծրագիր չունի եւ կառավարութեանը քննադատում է՝ առանց այլընտրանքային քաղաքականութիւն առաջարկելու: Այսպիսի գործողութիւնները հազիւ թէ համոզեն հասարակութեանը, թէ ՀԱԿ-ը կարող է համախմբուած ընդդիմադիր ուժ ձեւաւորել: Բացի այդ, Լեւոն Տէր-Պետրոսեանի ջանքերը ընդդիմադիր առաւել լայն հարթակ ստեղծելու ուղղութեամբ՝ Դաշնակցութեան եւ «Ժառանգութեան» հետ միասին, արդիւնք չտուեցին: Նախագահ Սերժ Սարգսյանին, մինչդեռ, յաջողուեց ամրապնդել իր իշխանութիւնը քաղաքական եւ գործարար վերնախաւի շրջանում», - ասուած է գեկոյցում:

«Եւ նոյնիսկ 2009 թուականի տնտեսական անկումը հակասօրէն չթուլացրեց նախագահ Սարգսյանի դիրքերը, - շարունակում են

գեկոյցի հեղինակները: - «Տնտեսական ակտիւութեան հեռանկարները 2011-2012 թուականներին բարելավման միտում ունեն արտաքին տնտեսական միջավայրի վերականգնման եւ տեղական պահանջարկի աւելացման հաշուին, ինչը կը պակասեցնի սոցիալական չուզումների հնարաւորութիւնը: Լարուածութիւնը, այնուամենայնիւ, սրուած է մնում իշխանական կողմից ինտրուէմ»:

Ինչ վերաբերում է սպասուող 2012 թուականի խորհրդարանական եւ 2013-ի նախագահական ընտրութիւններին՝ վերլուծութիւնը հաւանական է համարում, որ նախագահ Սերժ Սարգսյանի գլխաւորած Հանրապետական կուսակցութիւնը «կը շարունակի իր գերակայութիւնը խորհրդարանում»:

Զեկոյցի հեղինակները կարծիք են յայտնում, որ Հանրապետականը ընտրութիւններում իր դիրքերն ամրապնդելու համար «կ'օգտագործի վարչական ռեսուրսը, իսկ ընդդիմութիւնը կրկին դժուարութիւնների կը հանդիպի միասնական բլոկով հանդէս գալու անհնարինութեան պատճառով»:

Զեկոյցի հեղինակները փաստում են, որ չնայած Հայաստանում ընտրական գործընթացները բարելաւուելու համար որոշակի քայլեր կատարուել են, ընդդիմութիւնն ակնկալում է, որ կը վիճարկի ընտրութիւնների արդիւնքները: Բացառուած չեն նաեւ յետընտրական ցույցերը. «Իշխանութիւնները ցույցերը բռնի ուժով ցրելու հարցում աւելի գոլայ կը լինեն, քանի որ նրանց այդպիսի գործողութիւնները 2008 թուականին միջազգային հանրութեան կողմից լայնօրէն քննադատուեցին»:

ՄԻԽԵԻԼ ԱՎՐԱԿԱՇՎԻԼԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ ԶԱՅԵՐԵՆ Է ԽՕՍԵԼ

Վրաստանի նախագահ Միխէիլ Սահակաշվիլին ժամանել է Զաւախք՝ նոր միջպետական մայրուղու բացմանը մասնակցելու նպատակով: 203 կիլոմետր երկարութիւն ունեցող ճանապարհը, որը կառուցուել է «Հագարամեակի մարտահրաւէր» ծրագրի շրջանակներում, երկրի կենտրոնական շրջանները կապում է Հայաստանի եւ Թուրքիայի հետ:



Դիմելով Ախալքալաքի կենտրոնական հրապարակում հաւաքուած տեղի բնակիչներին՝ Սահակաշվիլին նախ հայերէն ասել է. - «Բարեւ ձեզ, եղբայրներ եւ քոյրեր: Ծնորհաւորում եմ ձեզ՝ մեր պայմանաւորուածութիւնների, ձեր երազանքի կատարման առթիւ: Այսօր մեծ օր է ողջ Վրաստանի համար»:

Այնուհետեւ, անցնելով վրացերէնի, Վրաստանի նախագահը շարունակել է. - «Սա շատ ուրախալի եւ պատմական օր է Վրաստանի համար: Վերջին մի քանի դարերի ընթացքում մեր երկրում 3 ճանապարհ է կառուցուել: Առաջինը Ռագմա-Վիրական ճանապարհն էր, որի նպատակը Վրաստանն ու ողջ Կովկասը անկախութիւնից գրկելն էր: Երկրորդը՝ Ռոքի լեռնանցքն էր: Դրա գործարկումը նպատակ ունէր կտրել այս տարածաշրջանի կապերը հարեւան միւս շրջանների հետ: Այդ ճանապարհը իսթարեց պատմական կապերը: Այս երրորդ ճանապարհը Ռոքի լեռնանցքի հակապատկերն է: Սա Վրաստանի միաւորման ճանապարհն է, սա ուղի է, որը

տանում է մեզ դէպի Վրաստանի միաւորումը»:

Անդրադառնալով Զաւախք-հայրենիքի ինդիւրներին՝ Սահակաշվիլին ասել է. - «Տարիներ շարունակ ճանապարհների վատ վիճակի պատճառով այս շրջանը գործնականում կտրուած էր կեանքից: Նախորդ կառավարութիւններն անում էին ամէն ինչ, որպէսզի շրջանը անտեսուած ու օտարուած մնայ: 2004 թուականից, սակայն, իրավիճակը փոխուել է»:

Թբիլիսի-Մալկա-Նինոծմինդա-Ախալքալաք նորաբաց ճանապարհի շինարարութեան արժէքը կազմել է 209 միլիոն ամերիկեան դոլար: Ծինարարութիւնը տեւել է մօտ 2 տարի: Եթէ նախկինում ավտոմեքենայով Թբիլիսիից Ախալքալաք ճանապարհը մօտ 8 ժամ էր տեւում, ապա այս նոր մայրուղու գործարկումից յետոյ մայրաքաղաքից հայաբնակ Զաւախք հասնելու համար ընդամէնը երկուսուկէս ժամ կը պահանջուի:

ԱԲԴՈՒԼԼԱՅ ԳԻԼ. ՄԵՆՔ ՄՇՏԱՊԵՍ ՇՓՄԱՆ ՄԷՋ ԵՆՔ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԶԵՏ

«Մենք մշտապէս շփման մէջ են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ»: Այս մասին յայտարարել է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիլը:

Թուրքիայի նախագահի թուրքիա վերադառնալու ճանապարհին օդանաւում ի պատասխան լրագրողի այն հարցին, թէ «Ներկայ պահին թուրքում ենք Հայաստանի օդային տարածքով: Հայաստանի հետ յարաբերութիւններում ինչպե՞ս նկատուում: Որեւէ յոյս կա՞ց գործընթացի առնչութեամբ», Թուրքիայի նախագահը յայտարարել է.

«Սա ասել եմ նաեւ խորհրդարանում՝ այսօրուայ իրավիճակը ոչ մէկի շահերից չի բխում: Եթէ ինդիւրները լուծուեն ու կասկած-

ները վերանան, շատ մեծ տնտեսական համագործակցութիւն կը ծնուի, եւ կարճ ժամանակամիջոցում պայթիւն տեղի կ'ունենայ Կովկասում: Իսկ այս ամէնի բացակայութիւնը ոչ մէկի շահերից չի բխում: Համարձակօրէն շատ լաւ սկիզբ է դրուել: Դա արուել է իմ նամակով»:

Ընդգծելով, որ գործընթացը չի մահացել, Աբդուլլահ Գիլը յայտարարել է. «Կովկասի հետ կապուած աշխատանքներ ենք իրականացնում: Այդ առնչութեամբ որոշակի հրահանգներ եմ տալիս պատկան մարմիններին, նախարարներին: Սարգսյանի, Ալիեւի, Պուտինի եւ Մեդվեդեւի հետ մշտապէս շփման մէջ ենք: Թեման շարունակում է տաք մնալ»:

ԱՄՆ-Ը «ՅԵՏԱՔՐՔՐՈՒՄԸ Է» ԶԱՅԱԿԱՆ ԱՏՈՍԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ

Միացեալ Նահանգները յոյս ունի, որ ամերիկեան ընկերութիւնները կը մասնակցեն Հայաստանում նոր ատոմակայանի կառուցման աշխատանքներին: Այս մասին Նոյեմբեր 15-ին Երեւանում յայտարարեց ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի Եւրոպական եւ Եւրասիական երկրներին ամերիկեան օժանդակութեան ծրագրերի համակարգող Դենիէլ Ռոզենբլումը:



Դենիէլ Ռոզենբլում

Յիշեցնենք, Հայաստանի կառավարութեան եւ ռուսաստանեան «Ռոսատոմ» կորպորացիայի միջեւ Օգոստոսին ստորագրուած համաձայնագրի համաձայն ատոմակայանի նոր էներգաբլոկի միջուկային կղզեակը կառուցելու է ռուսական «Ատոմատրոյէքսպորտը»: Սակայն անվտանգութեան սարքաւորումների մատակարարման համար մրցոյթ է յայտարարուելու, եւ Հայաստանցի պաշտօնեաների հաւաստիացմամբ մրցոյթին կարող են մասնակցել տարբեր երկրների կազմակերպութիւններ: Ըստ Դենիէլ Ռոզենբլումի, այդ հարցին այսօր անդրադարձել են Հայ-ամերիկեան միջկառավարական յանձնաժողովի նիստում:

ման հարցերի շուրջ: Այդ ոլորտում պատրաստ ենք շարունակել համագործակցութիւնը: Բայց միաժամանակ, կ'ողջունենք, եթէ ամերիկեան մասնաւոր սեկտորը հնարաւորութիւն ունենայ ներգրաւուել նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքներում», - նշեց ամերիկացի պաշտօնեան:

Հայ-ամերիկեան միջկառավարական յանձնաժողովի նիստում անդրադարձ է եղել նաեւ ամերիկեան կառավարութեան ջանքերը «Հագարամեակի մարտահրաւէրներ» ծրագրին: Նիստից յետոյ Հայաստանի էկոնոմիկայի նախարար Ներսէս Երիցեանի հետ համատեղ մամուլի ասուլիսում Դենիէլ Ռոզենբլումը մարտահրաւէրներ» կորպորացիայի կողմից Հայաստանում ֆինանսաւորուող ծրագրերը կ'աւարտուեն 2011 թուականի Սեպտեմբերին:

«Մենք հետաքրքրուած ենք, որպէսզի ամերիկեան ընկերութիւնները հնարաւորութիւն ունենան մասնակցել: Հայաստանի կառավարութեան հետ երկար տարիներ սերտօրէն համագործակցել ենք միջուկային անվտանգութեան, ատոմակայանի անվտանգ շահագործ-

ԵԹԵ ՄԵՋ ՊԱՐՏԱԴՐԵՆ

Շարունակուած էջ 1-էն

Ղարաբաղի հարցով Հայաստանի նկատմամբ կայ ուժեղ միջազգային ճնշում, քանի որ վերջին շրջանին աշխարհի տարբեր մասերում վրայ, յանկարծ ոճրագործ, յանցագործ եւ հայ բառերը սկսան իրար հետ կապակցուած օգտագործուիլ: Ըստ քաղաքագետի, Լեւոնային Ղարաբաղի Պաշտպանութիւն բանակի գորավարժութիւններու ժամանակ Հայաստանի նախագահի հնչեցուցած յայտարարութիւնը «որոշակիօրէն պէտք է ցոյց տայ, որ Հայաստանի նկատմամբ Լեւոնային Ղարաբաղի հարցով իրականացուող ճնշումները չեն աշխատում»:

Ռազմավարական եւ Ազգային Հետազօտութիւններու Հայկական կենտրոնի փորձագետ Մանուէլ Սարգսյանի կարծիքով, Սարգսյանի յայտարարութիւնը կատարուած էր ե՛ւ Ատրպէյճանի, ե՛ւ միջազգային հանրութեան համար՝ հասկացնելու, որ Հայաստան չի կրնար սպասել, թէ աշխարհը ինչպիսի համաձայնութեան կու գայ Ատրպէյճանի հետ:

Փորձագետի համաձայն, Հայաստան նման քայլերու կը դիմէ, յատկապէս վերջին շրջանին Ատրպէյճանի ղեկավարութեան կողմէ շարունակուող ռազմատենչ յայտարարութիւններու ու սահմանի վրայ շարունակաբար տեղի ունեցող բախումներու պատճառով:

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ

«ԹՐՔԱՐԱՅ ԶԱՄԱՅՆՔԸ՝ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԶԱՐԱՏՈՒԹԻՒՆՆ Է»

ԸՍԱԾ Է ԹՈՒՐԲԻԱՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՊՈԼՍԱՐԱՅ ԽՄԲԱԳԻՐ ԱՐԱ ՔՈՉՈՒՆԵԱՆԻ ԴԵՏ ԶԱՐՑԱԶՐՈՅՑԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Քիչունեան բացառիկ հարցազրոյց մը ունեցած է թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Էրտողանի հետ: Ստորեւ՝ այդ հարցազրոյցը:

- Վերջին տարիներուն մեր երկրին մէջ ապրուեցաւ մշտական բարեփոխումներու մթնոլորտ մը ու մեր ժողովրդավարութիւնը հասաւ նոր հարթութեան մը: Վերջին համաքուէի արդիւնքը կը ստեղծէ այն ակնկալութիւնը, որ այս թափը աւելնալով պիտի շարունակուի: Յառաջիկայ շրջանին համար ինչպիսի՞ թուրքիա մը կը նախատեսէք, եւ այս ամբողջին մէջ ինչպէ՞ս պիտի ըլլայ փոքրամասնութիւններուն դիրքն ու կացութիւնը:

- Ինչպէս գիտէք, Սեպտեմբեր 12-ին մեր ազգի գնահատանքով գործադրութեան անցաւ սահմանադրական փոփոխութիւնը, որ կը բաղկանայ 26 յօդուածէ: Իրականութեան մէջ այդ 26 յօդուածը չի դիմադրաւեր այն բոլոր փոփոխութիւնները, որոնք փափաքելի են սահմանադրութեան մէջ:

Սակայն այստեղ կայ կարեւոր կէտ մը: Մասնաւորապէս իրաւունքի գերակայութիւնը ամրապնդելու չափումով, Սեպտեմբեր 12-ի փոփոխութիւնը շատ ամուր հիմք մը ստեղծեց յառաջիկային կատարուելիք փոփոխութիւններուն եւ բարեփոխումներուն համար: 1982 թուականի սահմանադրութեան մէջ առաջին անգամ այս աստիճան հիմնական փոփոխութիւն մը կատարուեցաւ եւ առաջին անգամ այս աստիճանով միջամտութիւն մը կատարուեցաւ ոգիին այն սահմանադրութեան, որ բխած էր միջամտութեան մը: Մենք դուռը որոշ չափով բացինք, ճանապարհ հարթեցինք: Այս փուլէն վերջ, ժողովրդավարականացման բարեփոխումները այլեւս անցելի հետ անբաղադարելի թափով մը կեանքի կոչուելու հնարաւորութիւնը ունին: Այս 26 յօդուածներու փոփոխութեամբ նետը աղեղէն դուրս եկաւ: Հիմա 2011-ի ընտրութիւններէն վերջ նոր սահմանադրութեան մը աշխատանքներուն ալ պիտի սկսինք: Վստահ եմ, թէ այլեւս աւելի առողջ ու ժողովրդավարական գետնի մը վրայ կարելի պիտի ըլլայ պատրաստել այնպիսի սահմանադրութիւն մը, որ պիտի գրկէ մեր 73 միլիոնը, ու պիտի արտայայտէ մեր ամբողջ ազգին փափաքները, պահանջներն ու իտեղները: Այս հանգրուանէն վերջ այլեւս ինքզինք առարկայ չի կրնար ըլլալ թուրքիոյ մէջ ձեռքբերումներէ ետ քայլը, ժողովրդավարութեան գիշումը, ժողովրդավարական իրաւունքներու չետաձգումը կամ թուրքիոյ ժողովրդավարացման ուղղութեան շեղումը: Թուրքիա միշտ յառաջ պիտի երթայ, ամէն օր ալ աւելի պիտի ամրապնդէ իր ժողովրդավարութիւնը: Հարկ կը նկատեմ ընդգծել, որ այս բոլոր բարեփոխումները, այս բոլոր ձեռքբերումները շրջանակի մը, գանգուածի մը անդորրութեան համար չեն, այլ ամբողջ 73 միլիոնին երջանկութեան համար: Մենք ամբողջ 73 միլիոնը կ'ընկալենք որպէս առաջին կարգի քաղաքացի եւ ինչ որ կ'ընենք, մեր բոլոր քաղաքացիներուն համար կ'ընենք:

- Փոքրամասնութիւններու հաստատութեանց վերաբերեալ խնդիրները, մասնաւորապէս եւ վարժարաններու ոլորտին մէջ, զանազան դրակայն եւ յուսադրիչ զարգացումներով հանդերձ, կը շարունակեն մնալ օրակարգի վրայ: Նկատի ունենալով, որ այս ուղղութեամբ կը շարունակուի մեր կառավարութեան քաղաքական կամքն ու վճռակամութիւնը, ինչե՞ր կարելի է ակնկալել յառաջիկայ շրջանին համար:

- Մասնաւորապէս կ'ուզեմ հետեւեալը արտայայտել, որ ութ տարուն ընթացքին տարբեր հաւատքի խումբերու եւ էթնիք խումբերու խնդիրներուն վրայ ծանրացանք իսկական անկեղծութիւնով մը: Բացարձակապէս օրը փրկելու փափաքը չունեցանք: Բան մը ըրած ձեւացնելով, ժամանակաւոր լուծումներ արտադրելով գործելը բացարձակապէս տեղ չունի մեր քաղաքական հասկացողութեան մէջ: Նոյնպէս այս գործընթացին մէջ բացարձակապէս մերժեցինք պարտադրութիւնները: Բոլոր հաւատքի խումբերուն, բոլոր էթնիք խումբերուն հետ գտնուեցանք ամբողջական երկխօսութեան մը, խորհրդակցութեան մը մէջ: Մեր իւրաքանչիւր քայլին կապակցութեամբ տեսակէտները, առաջարկները, քննադատութիւնները նկատի առինք, ամէն հանգրուանին ներկայացուցինք ներուն, հասարակական կազմակերպութիւններուն հետ համագործակցութեան մէջ եղանք: Բնականաբար կը գնահատէք, որ հարիւրամեակներու ընթացքին կուտակուած խնդիրներ կան եւ անկարելի է գանտնք լուծել: Կարճ խօսքով, մեր առած իւրաքանչիւր քայլին դէմ մեր ժողովական մտայնութիւնով հանդէս եկող ընդդիմութեան նպատակն է հարցերու լուծումը դանդաղեցնել: Մենք սակայն առանց չքմեղանքներու, պիտի շարունակենք յառաջանալ մեր որդեգրած ուղղութեամբ:

- Թուրքիա-Յայաստան յարաբերութիւններու բնականոնացման գործընթացը, Ձեր ենթադրութիւններով, ինչպիսի՞ մթնոլորտի մը մէջ կրնայ շարունակուիլ: Յոռետեսութեան յաղթահարման ուղղութեամբ լաւատես ակնկալութիւններ ունենալը այս հանգրուանին միթէ շատ հեռու է իրատեսութենէ:

- Նայեցէք, թուրքիա որեւէ պետութեան դէմ թշնամանքի մէջ չէ: Մենք ցայսօր պատմութեան մէջ ապրուած ցաւալի դէպքերը երբեք որպէս գործոն չնկատեցինք ապագայի վերաբերեալ ընկալման ձեւաւորման գծով: Մենք 100-150 տարի առաջ որպէս ազգ բազմաթիւ պետութիւններու դէմ ինքնապաշտպանութեան պարտաւորուեցանք: Սակայն մեր անկախութեան պատերազմը յաղթանակով աւարտելէ վերջ, այդ բոլոր պետութիւններուն հետ նոր շրջանի մը սկիզբը դրինք եւ ծայր աստիճան բարեկամական յարաբերութիւններ հաստատեցինք: Նոյնը կրնանք յաջողիլ նաեւ Հայաստանի հետ: Ես ի սրտէ կը հաւատամ այս բանին: Պատմութիւնը թողնելով պատմաբաններուն, գիտնականներուն, մենք կրնանք միասնաբար ընթանալ դէպի ապագայ: Կը շարունակեմ հաւատալ, որ տակաւին կարելի է այս բանը: Հայկական Սփիւռքի մէկ մասը այսպիսի տեսլականով մը չի դիտարկեր հարցը, ինչ որ կարեւոր



Արա Քիչունեան եւ Ռեճեփ Էրտողան

խոչընդոտ մըն է այս գործընթացին տեսակէտէն: Իրականութեան մէջ համոզուած չեմ, որ հայկական Սփիւռքին մէկ մասը լաւութիւն կ'ընէ Հայաստանի համար: Կը յուսամ, որ այս խնդիրները կը յաղթահարուին: Ես կը պահեմ յոյսս:

- Թուրքիոյ մէջ գտնուող Յայաստանէն եկած գաղթականներուն վերաբերեալ մտաւորանցեալի Ձեր արտայայտութիւնները ստեղծած էին մեծ արձագանք: Ընթացքին արդեօք նոր չափումներ աւելցա՞ն այս միջին վերաբերեալ Ձեր տեսակէտներուն ու մտեցումներուն վրայ:

- Իրականութեան մէջ նոյն ինքն Ձեր հարցումը յստակօրէն կը պարզէ, թէ ինչպէս աղաւաղուած են իմ խօսքերս: Ես բացարձակապէս չակնարկեցի հայերուն, Հայաստանէն գաղթածներուն: Իմ խօսքիս մէջ անցած է «Թուրքիոյ մէջ ապօրինի աշխատող հայեր» արտայայտութիւնը: Ազգային եւ միջազգային մամուլին մէջ իմ այս արտայայտութիւններս օգտագործուեցան յետին նպատակով արշաւանքի մը համար որպէս աղաւաղուած նիւթ: Ապօրինի աշխատողն ու գաղթականը, զբօսաշրջիկը, քաղաքացին, օրինաւոր աշխատողը իրարմէ

բոլորովին տարբեր երեւոյթներ են: Իմ արտայայտութիւններս ծայր աստիճան յստակ են: Եթէ փորձուի հասկնալ անկեղծ ձեւով, ապա պիտի տեսնուի, թէ որեւէ խնդիր գոյութիւն չունի:

- Թրքահայ համայնքը վերջին շրջաններուն դժուարութիւններ կ'ապրի պատրիարքական ընտրութեան շուրջ: Համայնքէն ներս ակնկալութիւնները տեսակաւոր են: Անոնց եւ այս գործընթացին վերաբերեալ ի՞նչ է Ձեր մտեցումը:

- Որպէս կառավարութիւն, մեր պարտականութիւնն է հաւատքի գանազան խումբերու պարագային գետին ապահովել ազատ պաշտամունքի եւ արտայայտութեան ազատութեան համար: Մենք կ'ընենք մեզի վիճակածը ու պիտի շարունակենք ընել: Թրքահայ համայնքը ես կը նկատեմ թուրքիոյ կարեւոր եւ արժէքաւոր հարատւութիւնը: Գնահատանքով կը հետեւիմ այն պայքարին, զոր թրքահայերը կու տան ներքին անդորրի պահպանման եւ թուրքիոյ բարգաւաճման ուղղութեամբ: Անգամ մը եւս կ'ուզեմ նշել, որ մենք կ'աշխատինք 73 միլիոնի ամբողջին համար եւ հաւասար հեռաւորութեան վրայ կը մնանք 73 միլիոնին:

Հ.Մ.Մ. ի Տիկնանց Յանձնախումբը սիրով կը հրաւիրէ ձեզ

«Փուլ եւ քննեֆէ պրնպնէ»

Ուսխանաշի որ տեղի պիտի ունենայ Դեկտեմբեր 5-ին

«Կարօ Սողանալեան» սրահէն ներս առաւօտեան ժամը 10-ին

1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Հեռաձայնել Քնարիկին (626) 497-5111 կամ Ծովիկին (626) 492-8366

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԶԵՌՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆԻ ԱՌԹԻ

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Յաճախ ինձ հարցնում են, թե ինչո՞ւ առաջուկ նման շուտ-շուտ յօդուածներ չեմ գրում:

Մօտ մի տասնամեակ է հեռացել եմ ազգային-հասարակական ակտիվ գործունեությունից առողջական վիճակիս պատճառով, բայց մինչև 2006 թ. գոնե թղթակցում էի թերթերին: 2006 թ. Երեւանում եղբորս սղալի վաղաժամ մահից յետոյ հոգեբանական ապրումների մէջ եմ եւ ինձ մօտ յօդուածները դժուար երկունքով են մէջտեղ պալիս...:

Սոցիալական Երեւանի 25-ին տեղի է ունենալիք «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնի առթիւ որոշեցի որոշ մտորումներ կիսել ընթերցողի հետ:

Իմ ազգային-հասարակական գործունեությունն ընթացքում, երբ Պէյլանի հայրենակցական միությունն ատենապետն էի եւ Հայրենակցական միությունների միացյալ մարմին (ՀՄՄ) փոխատենապետը, միշտ մասնակցել եմ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնների կազմակերպչական աշխատանքներին, իսկ մինչ այդ, երբ թե՛ պատերազմ էր Արցախում՝ Medical Outreach for Armenians հաստատությունն Արցախին օգնելու կազմակերպած հեռուստամարաթոններին աշխատանքներին, որոնց մասին մանրամասն գրել եմ 2002 թ. Երեւանում լոյս տեսած իմ «Պէյլանի հայրենակցական միություն: 1989-2001 թթ.» գրքում: Անկախ Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններից եւ այն բանից, թե՛ հաւաքուած գումարը որքանով է ծառայում իր նպատակին..., բոլոր հեռուստամարաթոնների ժամանակ նուիրատուներին արել եմ, իսկ թոշակի անցնելուց յետոյ 4 ընկերներով 100-ական տոլարով ենք մասնակցել եւ 1959 թ-ից վաղեմի ընկերս՝ Նուպար Յարուսթիանեանը կանխիկ 400 տոլարը տանում յանձնում էր «Հայաստան» հիմնադրամի գրասենեակը: 2009 թ. Նուպարը եւ մի այլ ընկեր հեռացան երկրաչին կեանքից, Աստուած լուսաւորի հոգիները: Նուիրատուները շարունակուելու է, բայց...:

«Հայաստան» հիմնադրամի հեռուստամարաթոնի նպատակը միայն դրամ հաւաքելը չէ: Այն այդ առիթով համախմբում է հայրենիքի եւ սփիւռքի հայ ժողովրդին մի նպատակի շուրջ՝ հզորացնել հայրենիքն ու սփիւռքը միասնական ուժերով:

ուժերով:

Գաղտնիք չէ, որ հայկական սփիւռքը հիմնականում առաջացաւ 1915 թ. Հայերի ցեղասպանությունից հետեւանքով եւ իր գոյությունն ընթացքում պայքարում է պահպանել ինքնութիւնը եւ փարուել հայրենիքին, որպէսզի կարողանայ յարատեւել մինչեւ պայմաններ ստեղծուեն իր կեանքը գոյատեւելու հայրենիքում: Հետեւաբար, սփիւռքը սիրաշահելու ու համախմբելու համար անհրաժեշտ է նրա հետ անկեղծ վարուել, վատահուստութիւն ձեռք բերել, հաշուի առնել նրա կարծիքը եւ յարգել Հայաստանում ներդրում կատարող սփիւռքահայերին՝ չվնասել նրանց, ունեցուածքը ձեռքներից չխլել ... ու ահ տալով չվնասել հայրենիքից: Անհրաժեշտ է նրանց (ինչպէս նաեւ Հայաստանի ժողովրդի) համար իրաւական դաշտի ուժը կիրառել ու անձնական ունեցուածքի ապահովութիւնը երաշխաւորել պետական մակարդակով: Եթէ Հայաստանի դեկավարները այս քայլին դիմէին ժամանակին, սփիւռքահայ ներդրողը չէր հրաժարուի ու հեռանայ հայրենիքից եւ այսօր կ'ունենայինք զգալի բարգաւաճ Հայաստան:

Հեռուստամարաթոնը նաեւ առիթ է հանդիսանում բազմաթիւ իրար կորցրած հարազատների իրար գալու: Այս կապակցութեամբ նշեմ հետեւեալը.

1915 թ. Հայերի ցեղասպանությունից ժամանակ 3 քեռիներիցս մէկն է ողջ մնացել, որ, չնայած որպէս գրագէտ թրքական բանակում եղել է բանակի հրամանատարի քարտուղարը եւ մեծ յարգանք է վայելել, սակայն չհաղուրժելով թուրքերին փախել է Եգիպտոս, բնակութիւն հաստատել Գահիրէում, ամուսնացել ու երկու տղայ է ունեցել, որոնք բարձրագոյն կրթութիւն են ստացել, բայց հայերէն գրել-կարդալ չեն իմացել: Քանի դեռ ողջ էին քեռիս ու կինը մենք Հայաստանում նամակակցում էինք նրանց հետ: Մամաս ու եղբայրն այս աշխարհից հեռացան իրար տեսնելու կարօտը սրտներում: Մեր կապը կտրուեց նրանց տղաների հետ: Անցեալ տարուայ՝ 2009 թ. հեռուստամարաթոնի ժամանակ հեռուստացոյցի էկրանին ցուցադրուող նուիրատուների անունների մէջ կարդացի քեռիս տղայի՝ Վահրամ Մուրադեանի անունը՝ ժնեւից, որը հիմնադրամին նուիրել էր 320 եւրօ: Ծատ ուրախացայ, որ հիմնադրամի միջոցով կարող եմ կապ ստեղծել նրա հետ: Դեկտեմբեր 14-ին զանգահարեցի «Հայաստան» հիմնադրամի գրասենեակը Լոս Անճելեսում: Կրէկ անունով մի երիտասարդ պատասխանեց զանգիս, որը սփիւռքահայ էր: Ես աւելի ուրախացայ, քանի որ սփիւռքահայը ցեղասպանությունից արհարհուրեց զգացել է իր կաշուի վրայ եւ նրա սերունդը աւելի շուտ կը հասկանայ քեզ: Նրան պատմեցի քեռիս ու մամայիս պատմությունը եւ ինդրեցի, եթէ հնարաւոր է գտնել ու ինձ յայտնել Վահրամի հեռախօսի համարը: Նա խոստացաւ, բայց խոստումը մնաց օդում...: Այս տարուայ (2010 թ.) Հոկտեմբերի 21-ին նորից զանգեցի գրասենեակ եւ քարտուղարուհուն՝ Ազատուհին ինդրեցի լսափողը փոխանցել տնօրէնին՝ պրն. Սարգիս Քոթանջեանին, որպէսզի նրա օգնութեամբ դիմեմ այդ հարցում: Ազատուհին յայտնեց, որ նա տեղում չէ, ինչ հարցով եմ զանգում: Ես նրան պատմեցի վերոյիշեալ պատմութիւնը: Նա խոստացաւ իմ ինդրանքը անյապաղ հաղորդել տնօրէնին: Ես շնորհակալութիւն յայտնեցի ու սպասեցի պատասխանին ու չստանալով այն, մի քանի օր յետոյ նորից զանգեցի: Ազատուհին տարբեր մօտեցում ունեցաւ. տնօրէնը խիստ զբաղուած է ու համարեա տեղում չի լինում եւ այլն: Յետագայ զանգերով ես այդպէս էլ չկարողացայ խօսել նրա հետ: Երեւի նրան չի հետաքրքրում այդպիսի «մանրմունք» հարցերը, բացի հիմնադրամի համար դրամ հաւաքելուց:

Պրն. Քոթանջեանը վիրաւորեց ոչ միայն իմ ինքնասիրութիւնը, այլ յանձին ինձ՝ ամբողջ հայ ժողովրդի ինքնասիրութիւնը, չէ՞ որ զանգողը կարող էր լինել ցանկացած հայ: Բայց եթէ զանգողը նրան յայտնէր, որ շօշափելի գումար է նուիրելու հիմնադրամին, նա անմիջապէս կը պատասխանէր զանգին: Չի կարելի բիւրոկրատական վերաբերմունքով արհամարհել ցանկացած մարդուն որտեղ էլ լինի, մանաւանդ Ամերիկայում: Նա պէտք է հասկանայ, որ ինքը ժողովրդի համար է աշխատում, որի լուծմաներից է գոյանում հիմնադրամի ֆոնդը եւ պարտաւոր է յարգել իւրաքանչիւր հայի բեկորն ու պատշաճ վերաբերմունք ունենալ նրա նկատմամբ: Չպէտք է մոռանալ, որ հիմնադրամի գրասենեակներում աշխատողների մեծ մասն եկամտանեղը հիմնադրամի ֆոնդից են: «Հայաստան» հիմնադրամի գրասենեակներն ու Հայաստանի այլ կառույցներն սփիւռքում պէտք է կազմաւորուեն բարձր ազգային գիտակցութեամբ, ազգա-



սէր, կիրթ եւ բարեհամբոյր աշխատողներից, որոնք իրենց հետ շփուող անհատներին ձգեն դէպի հիմնադրամն ու հայրենիքը սիրալիք վերաբերմունքով:

Սփիւռքն ապրում է հայրենիքով եւ նաեւ հանդիսանում է նրա թիկունքը: Հայրենիքն իր արարքով պէտք է վստահութիւն ներշնչի սփիւռքին: Ֆուտբոլային քաղաքականութիւնը եւ այդ առիթով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի ներկայութիւնը սփիւռքում շատ սահմանափակներ ունեցաւ եւ մեծացրեց ճեղքը հայրենիքի ու սփիւռքի միջեւ: Սակայն սփիւռքն հասկանալով Հայաստանի պետական կայացման ճանապարհի դժուարութիւնները հայի գոյատեւման համար, աշխատում է ամէն կերպ օգտակար լինել Հայաստանին:

1980-ական թուականներին բազմաթիւ հայ երիտասարդներ իրենց կեանքով հատուցեցին Հայերի ցեղասպանութիւնը միջազգայնացնելու ճանապարհին, որից յետոյ աշխարհի բազմաթիւ պետութիւններ ճանաչեցին Հայերի ցեղասպանութիւնը:

2009 թ. Օգոստոսի 31-ին Շուեյցարիայի Յիւրիխ քաղաքում հայ-թրքական յարաբերութիւնների մասին ստորագրուած արձանագրութիւնները սառեցրին Հայերի Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը: Յնուելով արձանագրութիւնների վրայ, ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Պարաք Օպաման չկատարեց իր խոստումը, չճանաչեց Հայերի ցեղասպանութիւնը՝ նշելով, որ այդ հարցը քննարկում է Հայաստանի ու թուրքիայի միջեւ: Դա դեռ բաւական չէր: Այս օրերին աւելի անաւոր նորութիւն յայտնուեց: Ըստ տարածուած լուրերի պարզուեց, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը զանգահարել է ԱՄՆ-ի փոխնախագահ Ճօ Պայտինին եւ ինդրել նրան Հայերի ցեղասպանութեան հարցով ճնշում չգործադրել

Մար.ը էջ 19

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ Ի ՆՊԱՍՏ 11-ՐԴ ԱՆՆԱԽՆԸՆԹԱՅ ԹԵԼԵԹՈՆ



Թելեթոնի մասնակից ազգայիններ եւ հասարակական գործիչներ



Արժ. Տ. Յովսէփի Քահանայն, Գերշ. Տ. Յովնան Սրբազանի օրհնաբեր պատգամով եւ աղօթքով սկիզբ դրեց Հոկտեմբեր 31, 2010 թելեթոնին



Ազգանուէր հայորդի 91 ամեայ Գրիգոր Այվազեան իր որդու Հերիի հետ ջերմացրին թելեթոնի ընթացքը թէ իրենց ջերմ ուղղչյուններով եւ թէ իրենց բացառիկ նուիրատուութեամբ



Յովհաննէս Բալայեան, Կլեմտէյի Բաղաճապետարանի խորհուրդի անդամ Ֆրանկ Քինթրո եւ Յովիկ Գապիկեան

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅՆԱՆ

Կիրակի, Հոկտեմբեր 31, 2010-ին, Լոս Անճելըսի AMGA 380, HIGH VISION 381 և AABC 384 կայաններէն կ.ե. ժամը 4:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 12:00 մեծ խանդավառութեամբ տեղի ունեցաւ Հայաստանի ծնողազուրկ եւ հաշմանդամ մանուկներուն ի նպաստ դրամահաւաք-թելեթոն մը: Այս փոքրիկներէն ոմանց հայրերը հայրենիքի փառքին եւ Արցախի ազատագրման համար իրենց կեանքը զոհեցին եւ արդարօրէն արժանացան «ազատամարտիկ»ի պատուաբեր անունին, այս պղտիկներէն ոմանք այս հերոսներուն զաւակներն են:

Այդ օր, բազմահազար հայորդիներ, որոնց սիրտն ու հոգին օրուան բոլոր ժամերուն կը տրոփեն հայրենիքի եւ մեր ժողովուրդի ծառայութեան բաբախումներով, մաս կազմեցին այդ թելեթոնին եւ պէտք է ըսել, որ այդ օր, այս թելեթոնով Լոս Անճելըսի հայութեան պատմութեան մէջ պատուաբեր էջ մը արձանագրուեցաւ: Այս կարճատեւ եւ համեստ ուժերով կազմակերպուած թելեթոնով, հայ ժողովուրդը անգամ մը եւս ցոյց տուաւ, թէ կարիքներու եւ դժուարութիւններու պարագային, հայը զիտէ զոհաբերել, զիտէ միանալ եւ զիտէ համախմբուած ճիգերով հայրենաշէն գործեր կատարել:

Ահա մեզի այսպիսի պատկեր մը եւ պատգամ մը եկաւ այդ թելեթոնին: Կազմակերպիչ մարմնի անդամները, բոլորն ալ Մեծն Լոս Անճելըսի հայութեան քաջ ծանօթ,

սիրուած եւ յարգուած երիտասարդներ էին, ղեկավարութեամբ «չաւերժ երիտասարդ», չոզնիլ չգիտցող «Քաջ Նազար» թելթի եւ հեռատեսիլի ժամի ղեկավար՝ Յովհաննէս Բալայեանի:

Թեմիս բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի բացման աղօթքով եւ օրհնութեամբ, որ ի բացակայութեան Նորին Սրբազանութեան, կատարեց Լա Քրեսանթա Մուխի հովիւ Արժ. Տ. Յովսէփ Ա. քհնյ. Յակոբեան, սկսաւ այս թելեթոնը:

Ապա ժողովուրդը հեղեղի պէս իր նուիրատուութիւնները սկսաւ հասցնել եւ տալ այս թելեթոնին, մեծատունը իր գանձով, համեստ աշխատողները իրենց լուծումներով, մտաւորական, հասարակական գործիչները իրենց կոչերով, բոլորը, բոլորը ջերմ ու սրտազին կոչերով դիմեցին ժողովուրդին մաս կազմելու այս թելեթոնին:

Այդ օր, իրենց կոչերով, խօսքերով ելոյթ ունեցան Կաթողիկէ համայնքի հոգեւորականներէն, Կլեմտէյի Ս. Գրիգոր Լուսաւորչեկեղեցուց փոխ-հովիւ Տ. Արմենակ Վարդապետ Պետրոսեան, Կլեմտէյի քաղաքագլուխ Տիար Արա Նաճարեան, քաղաքապետարանի խորհուրդի անդամներ Լաուրա Ֆրիտման, Ֆրանք Քինթրո, Նախկին քաղաքապետ Լարի Չարեան, Հնչակեան կուսակցութեան Յարութ Տէր Դաւիթեան, Էստիմպլիմէն Մաչք Կաթօ, «Սարեան մեղրի ընկերութեան» սեփականատէր Վրէժ Սարեան եւ այլն:

Հո՞՞ք բազմութիւն մը անձամբ ներկայ էր AMGA հեռատեսիլի

կայանը իր նիւթական լուծումներովն իր աչս գործին:

Ոմանք իրենց տարեդարձին, ուրիշներ իրենց ուրախ առիթներու եղած ու հաւաքուած նուէրները բերին և յանձնեցին այս գործի պատասխանատուներուն:

Տիար Գրիգոր Այվազեան, պատուաբեր հայորդի մը, որուն ծննդեան 91-ամեակն էր, ներկայ եղաւ եւ սրտազին կոչ ըրաւ ժողովուրդին եւ իր տարեդարձին առթիւ հաւաքուած 2000 տոլարը նուիրեց այդ օր, իսկ իր զաւակը՝ Կէրի Այվազեան նոյն ուրախ առիթով 5000 տոլար եւս նուիրեց այս թելեթոնին:

Գաղութիս հանրածանօթ և շատ յարգելի իրաւաբան՝ Տիկ. Ռիթա Մահտեսեան շատ յուզիչ եւ սրտաշարժ կոչ մը ուղղեց ժողովուրդին, եւ հայ ժողովուրդին ծանօթացուց Siophan Nash անունով համալսարանի պատմութեան դասախօս-փրոֆեսորի մը, որ քանի մը անգամ Հայաստան այցելած է: Յարգելի հիւրը, խորապէս ազդուած, կոչ մը ըրաւ մեր ժողովուրդին սատար եւ օժանդակ հանդիսանալու մարդասիրական այս սուրբ եւ պատուական գործին:

Նմանապէս բազմաթիւ ազգայիններ, հասարակական գործիչներ մաս կազմեցին եւ կոչ ըրին. օրինակ, Շահէ Քէօրօղլեան, ծանօթ գրող Սարգիս Մաճառեան, ղեղադործ Վահան Ալադադեան, հանրա-

ծանօթ գործիչ Վարդան Կարապետեան, Տոքթ. Արամ Գարագաշեան:

Ութ ժամ տեւած այս թելեթոնին, ելոյթ ունեցան բազմաթիւ երգիչներ եւ արուեստագէտներ, որոնց բոլորին կ'ըսենք՝ «ձեր վարձքը կատար»:

Կարելի չէ մեր այս համեստ գրութիւնը վերջացնել, առանց գնահատանքի մեր ամենաջերմ խօսքերը ուղղելու այն բոլոր երիտասարդներուն, որոնք այնքան մեծ «ճանով-ճիկարով», խանդավառութեամբ և մեծագոյն հաճոյքով ութ ժամ վարեցին այս թելեթոնը: Անոնք են՝ Չաթրեան Վիտէյի սեփականատէր աննման Աբօ Նազարեան, Լոս Անճելըսի ողջ հայութեան շատ լաւ ծանօթ Յարութիւն Յարութեան, երիտասարդներ Ստեփան Յովակիմեան, Յովիկ Գապիկեան, Սարգիս Թօփալեան, Արմէն Բարսեղեան եւ այլ համբուրելի երիտասարդ-երիտասարդուհիները, որոնք ամէն տարի 11 անգամ ըլլալով զիրենք այդ հեռաձայններուն ետին տեսած ենք:

Գնահատանքի մասնաւոր խօսք AMGA, HIGH VISION և AABC TV կայաններուն, որոնք

ինչպէս ամէն տարի, այս տարի եւս մեծագոյն ուրախութեամբ կայաններու սուղ ժամերը տրամադրեցին այս գործին:

Վարձքը հազար կատար ըլլալ, Յովհաննէս Բալայեան:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎԱՍՏԱՎԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՓԱՌԱՏՕՆ



ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Բայց օրուայ խորհուրդը քաղաքական հարցերի քննարկումը չէր: Նոր եկող բարեկամին բարեմաղթանքների եւ խորհուրդներ տալու հերթն էր. ոմանք արդէն սրտնեղուել էին շատախօսութիւնից: Լոս Անձելոսեան կեանքի լաւ ու վատ կողմերը ներկայացնելու մի տեսակ մրցոյթ սկսուեց: Սակայն սեղանի հակառակ կողմը նստած ընդիմախօս, կարծես գրոյցի էլ քիչ չէր բաւարարուել, փորձում էր առանց պատշաճութիւնը խախտելու վերադառնալ քաղաքական հարցերին:

Այսպիսով սկսուեց բանավէճի երկրորդ ռաունդը, որից անկեղծ ասած, հիասթափուեցի:

Ընդդիմախօս ընկերը պետական քարոզչամեքենայով յորջորջուող, Հայաստանի տնտեսութեան երկնիչ թռչելով աճը, յամաօրէն փորձում էր որպէս ժողովրդի կենսամակարդակի աճ ներկայացնել: Իսկ ես չէի կարող չհակադարձել, ասելով, կոռուսպացուած եւ բռնատիրական վարչակարգի պայմաններում, ազգային եկամտի զգալի բաժինը իշխող փոքրաթիւ եւ թիկնապահներով շրջապատուած անկուշտ իշխանակներն են խժուած:

Օրուայ հացի համար մաքառող եւ մեծամասնութիւն կազմող ժողովրդի բաժինը այս տնտեսական աճից նշմարուող չի կարող լինել: Թերեւս անգամ եթէ հաւատանք այս թուերին, արձանագրուած հազիւ նշմարուող բաժինը, սպառողական ապրանքների թուիչ քայլին գնաճի պայմաններում անհետանում է: Ստացուած է որ անունը կայ ամանում չկայ:

Հայաստանից նոր ժամանած բարեկամը, զարմացած հետեւում էր զրոյցին, կարծես ազատ ու անկաշկանդ բանավէճը դուր էր եկել իրեն, փորձեց մասնակցել, թէեւ ոչ այդքան համարձակ ձեւով: Անհամարձակութեան համար, կողքից մի ռեպլիք լուսեց՝ «Վախը չափել է պէտք»:

Նա ներկայիս իրավիճակի պատճառը տեսնում էր, կաշառակեր չինովիսիկների ազահութեան եւ հասարակ ժողովրդի ընչաքաղցութեան մէջ, թէ ինչ է, մէկ պարկ ալիւրի դիմաց իրենց ձայնը ծախում են, այսինքն լիարժէք չէր կարողանում քննադատութեան նետը ուղղել աւելի բարձր, ասեմք նախագահի կամ բարձր այլ պաշտօնեայի կողմը, չէ՞ որ ասում են ձուկը գլխից է հոտում այս իրավիճակի գլխաւոր պատճառը պէտք է որոնել վարչական բուրգի վերեւում:

Ստացուած է այն, որ մի պարկ ալիւրը գոյատեւման խորհրդանիշն է դարձել, իսկ Նախագահին քննադատելու վախը ինքնապաշտպանութեան խորհրդանիշ: Ապա ո՞ւր մնաց Հայ մարդու, կամ Հայաստանի քաղաքացու կամքը, ազատ արտայայտուելու իրաւունքը, իր երկրի ճակատագիրը որոշելիս:

Տունը, Հայ մարդու հիւրընկալ օճախը, անուշ ուտեստեղէնը, հրաւիրում էին դեռ անօթի մնացած հիւրերի ուշադրութիւնը: Այս ամէնի հետ միասին, մտքերի ազատ արտայայտման մթնոլորտը ներքուստ մի հաճելի լարուածութիւն էր ստեղծել: Ակամայից մի պահ յիշեցի դեռ ուսանողական շրջանից ստացած այն տպաւորութիւնը, որ եւրոպայից ժամանած մի լրագրող

բազմաթիւ շփումներից յետոյ արտայայտուել էր թէ «Հայկական սեղանները համալսարանական յատուկ դասընթացներ են յիշեցնում»: Հայաստանի տնտեսութեան զարգացման քաղաքական մասը դեռ անաւարտ էր մնացել:

Փորձեցի պնդել իմ այն տեսակէտը որ Քոչարեանական վարչակարգի հաստատումից յետոյ տարածաշրջանային զարգացման բազմաթիւ պլաններից դուրս մնալու պատճառով, Հայաստանը զգալի կորուստներ ունեցաւ, օրինակ բերելով «Պաբու-Ջեյհան» նաւթամուղը որ սկզբում նախատեսուած էր Հայաստանի հիւսիսային մասով անցնէր, որ բնականաբար պէտք է ապահովէր հսկայական թէ՛ տնտեսական, թէ՛ քաղաքական շահեր: Սակայն արտաքին քաղաքականութեան մէջ թոյլ տրուած սխալների, եւ անպտուղ ակտիւութեան պատճառով նաւթի հսկայական խողովակաշարը շրջանցեց Հայոց աշխարհը, էլ աւելի մեկուսացնելով նրան, եւ հեռացնելով տարածաշրջանի, իրադարձութիւններում թելադրողի կարգավիճակից:

Չրոյցի ընթացքում նկատուելով ինձ լսող մարդկանց հաշտեցը, թւում էր թէ այս ռաունդը ինձ տանում է յաղթական աւարտի, սակայն աւաղ հիասթափութիւնս սպասեցնել չտուեց, սեղանի իմ շարքից մէկը, արտայայտուեց լուրջ տոնով իր մտքում եղածը «Երեւի Չոկել էն որ հայերը շուտաւ են, կարող է տրուեն ծակեն եւ նաւթը գողանան»: Ես շփոթուեցի մի պահ, ոմանք ծիծաղեցին ու քրքրացին, հումորով ընդունելով ճարպիկ հայերի մասին արտայայտուած միտքը: Իսկ ես ընդհամէնը ասացի. Հայաստանը շրջանցելու համար լրացուցիչ ծախսեցին մօտ 3 միլիարդ տոլար, իսկ մեր այդ ճարպիկները հազիւ թէ այդքան գողանային: Ինձ մնում էր փոքր ինչ միլիարդներու այն թուաբանութիւնից որ ինձ ունկնդրողների շարքում, «ճարպիկ Հայերի» համար, անհոգ ծիծաղողների թիւը աւելի քիչ էր, քան ինձ նման շփոթուածներինը:

Celebrate the Holidays at PHOENICIA RESTAURANT

Now taking reservations for your business or personal family gathering holiday party.

November 25 Thanksgiving Day	January 1 New Year's Day
December 24 Christmas Eve	January 5 Armenian Christmas Eve
December 25 Christmas Day	January 6 Armenian Christmas Day
December 31 New Year's Eve	

For more information call: **818.956.7800**

343 N. Central Ave., Glendale, CA 91203 • fax: 818.956.0320 phoenicia.com

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԱՅՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ մնջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քաքուղի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքմիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

«ԱՆՅՐԱԺԵՇՏ ԵՇ ԴՈՒՄ» ԻՆ ԵՇ ԴՈՒՄ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Երկրորդ անգամն է որ կը գրեմ նոյն նիւթին մասին՝ արտայայտելու համար Այտա Պուճիգանեանի «Լիբանանի Հայերը իրենց անցեալը, ներկան եւ ապագան» խորագրեալ գիրքին մասին: Բայց, ըստ երեւոյթին, ան դժգոհ մնացած է առարկայական դատումներէ, որոնց դէմ իր պատասխանը տուած է «Նոր Օր»ին մէջ, «Անհրաժեշտ ձշգում մը խորագրով»: Այս երկրորդէն պիտի ուզէի խոստիած ըլլալ, եթէ «Անհրաժեշտ ձշգումով դարձեալ մոլորանքի մէջ չի յնար: Սկսին գիրքին վերնագրէն՝ «Լիբանանի հայերը, իրենց անցեալը, ներկան եւ Ապագան»: Անցեալին ու ներկային մասին արտայայտուելը հասկնալի է հիմնուելով կատարուած ու չկատարուած գործողութեանց վրայ, բայց ապագան... որ կանխատեսելու համար քիչ մըն ալ բախտագուշակ պէտք է ըլլալ:

Հեղինակը կ'ըսէ թէ գիրքը «Հանրագիտարան մը չէ, ոչ ալ ցուցակ մը՝ անունի, դէպքի, հաստատութիւններու եւ այլն: Գիրքը կազմուած է 14 գլուխներէ, նիւթերու խոր պատրաստութեամբ, որոնք ներկայացուած են Պէյրութի Հայկազեան համալսարանի հայագիտական բաժանմունքի կազմակերպած գիտաժողովին»: Այն չէ, այն չէ, հապա ի՞նչ կը պարունակեն այդ «խոր պատրաստութեամբ» գրուած 14 գլուխները: Եւ դեռ... «Գիտաժողովին մէջ տեղ չէր գտած Լիբանանի Հայկական վարժարաններու մասին առանձին գեկուցում մը»: Բայց գաղութի մը պատմութիւնը տալու համար անհրաժեշտ է ներկայացնել այդ գաղութին ազգային հաստատութիւններուն ընդհանուր պատկերը, որուն մէջ առաջնակարգ տեղ ունի հայ դպրոցը: Եւ ի պատիւ լիբանանահայութեան, որուն պատմութիւնը գրած ըլլալ կը յաւակնի Ա. Պաչէճեան, անհրաժեշտ է յիշել որ ցեղասպանութենէ ճողոպրած հայու բեկորները Լիբանանի եւ անշուշտ ամբողջ Սփիւռքի առաջին հայ դպրոցը հիմնած են 1924ին Նուպարեան անունով, որմէ կը թուի թէ տեղեակ չէ ան եւ չի գիտեր նաեւ թէ ինչո՞ւ Նուպարեան կոչուած է ան, բայց կը

յայտնէ թէ յառաջիկայ հրատարակութեան մը մէջ պիտի գտնէ «Իր աջնքան սիրած վարժարանին անունը», սինիք հեզնանքով գիտ միութարել փորձելով: Ուրիշ մոռացումներ ալ կան, որոնց մէկ հատին մասին ճարպիկ կերպով կ'ըսէ. «Տես այսինչ գլուխ, այսինչ էջ» ու կ'անցնի:

Կրկնելու գինով դարձեալ ճակատաբաց կը յայտարարեմ թէ աշխարհի վրայ ոչ մէկ անձ կամ հաստատութիւն միջազգային ճանաչում գտած հայկական ազգանունի եան վերջաւորութիւնը խեղաթիւրելու ինքն ինքն չէ: Այս մասին կատարած չքմեղանքը, թէ ինք առաջինը չէ, գինք չարդարացներ, որ քան ալ փորձէ ապաւինել Ամերիկեան քոնկրէսի մատենադարանի տառադարձութեան կանոններուն: Ամերիկեան քոնկրէսը չէ որ պիտի որոշէ հայերէն լեզուի ուղղագրութիւնը, այլ ինք է որ պէտք է հետեւի մեզի:

Տիկին Այտան իր գրութիւնը կը վերջացնէ խրատականով մը. «Կը խորհիմ նաեւ, թէ նման գիտական հրատարակութիւններ արժանի են քիչ մը աւելի պատասխանատու մօտեցումի, երբ մէկը ուզէ հրապարակաւ արտայայտուել անոնց առաւելութիւններուն եւ թերութիւններուն մասին: Այսինքն, եթէ գնահատանքի կողքին պէտք տեսեր եմ նաեւ քննադատել, անպատասխանատու եղայ: Տիկին Այտան պատրաստ էր քիչ մը աւելի յարգալիր եւ նոյնիսկ երախտապարտ ըլլալ մէկու մը հանդէպ, որ իր գիրքը ընթերցողներու լայն հասարակութեան մը ուշադրութեան առարկայ ըրաւ: Ան շատ կը սիրէ գիտական ածականը, բայց գիտաժողովներու մասնակցած այս տիկին փաստօրէն գիտական մօտեցում չունի: Որովհետեւ գիտական մօտեցում ունեցողը դիւրագրգիռ պէտք չէ ըլլալ արտայայտուած աննպաստ կարծիքներուն նկատմամբ: Արդարեւ, գիտականը եւ դիւրագրգիռութիւնը անհամերաշխ են իրարու:»

Այսուհանդերձ, կատարած քննադատութիւններու եւ գնահատանքս եզրակացնելով կը կրկնեմ, թէ օգտակար գիրք մըն է Լիբանանահայ պատմութեան համար:

ԽԱՂԸ ԵՒ ԽԱՂԱԿՔԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ

ԽԱՂԸ ԶԱՐԳԱՅՆՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ

Մեծահասակները ընդհանրապէս խաղին շատ կարեւորութիւն չեն տալիս, մինչդեռ խաղը մեծ նշանակութիւն ունի երեխաների անհատականութեան ձեւաւորման եւ հասարակական զարգացման տեսակէտից եւ այդ ազդեցութիւնը յարատեւում է նրանց կեանքի ամբողջ ընթացքում:

Հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ աշխոյժ, պատկերաւոր ու երեւակայական խաղերը ոչ միայն ժամանցից բացարձակապէս աւելի խորն ազդեցութիւն են թողնում երեխաների աճի վրայ, այլեւ չափազանց նպաստում են նրանց մտային կարողութեանը, ընկերային, զգացական ու ֆիզիկական զարգացմանը:

Մանկութեան շրջանի խաղերը հիմք են ծառայում երեխաների սովորելու եւ ապագայ ուսումնառութեան մէջ յաջողութիւն արձանագրելու գործին:

Ուսումնասիրութիւնները վկայում են, որ դպրոցական խաղերն ու զարմանք ուժեղացնում են երեխաներին իրենց դպրոցական դասերը սերտելու հարցում: Խաղի միջոցով երեխաները սովորում են, թէ ինչպէս համագործակցել ուրիշների հետ: Նրանք այդպիսով նաեւ զարգացնում են իրենց լեզուային կարողութիւնները, ճանաչում դժարութիւնները եւ լուծում դրանք, ապա ծանօթանում իրենց կարողութիւններին:

Այլ կերպ ասած, խաղը երեխաներին առիթ է տալիս եւ օգնում, որպէսզի իրենց տեղը գտնեն աշխարհում:

Նրանց վերացական ու մաթեմատիկական հասկացողութիւնները զարգանալով, նրանք սկսում են իրական աշխարհն աւելի լաւ ընկալել: Խաղը շատ մեծ նշանակութիւն ունի երեխայի յիշողութեան զարգացման, խնդիրների լուծման խնդրում հմտութիւններ ձեռք բերելու եւ ստեղծագործական ոգի ներշնչելու համար: Խաղը երեխաների աճի տեսակէտից ունի տարբեր ֆունկցիաներ:

Ֆիզիքական զարգացում: Ակտիւ խաղերն ու թռչկոտները խթանում են երեխաների ֆիզիկական աճը: Խաղը երեխաների գիրութիւնը կանխելու լաւագոյն միջոցն է: Խաղը նպաստում է երեխաների մկանների աճին եւ բարեկազմութեանը:

Հասարակական եւ զգացական զարգացում:

Խաղը պատճառ է լինում, որ երեխան միջավայրում իրեն համարի ակտիւ գործօն եւ ոչ թէ միանհատ, որը միմիայն գործողութիւն է կատարում:

Տանը եւ դպրոցում առհասարակ երեխաներից պահանջուած է հետեւել որոշակի ու սահմանաւոր վարքագծի, բայց խաղի աշխարհում երեխան կարող է աշխարհը փոքրացնել եւ իր հասակի չափ դարձնել, ապա ինչպէս կամենում է, այնպէս վարել: Այն երեխաները, ովքեր խմբային խաղեր են խաղում, միւսների համեմատ համագործակցելու, որոշելու եւ ղեկա-

վարելու աւելի շատ կարողութիւն ունեն: Նրանք նաեւ յաջողում են զսպել իրենց գործողութիւններն ու յոյզերը:

Դերերի փոքրում: Երեխաները յաճախ խաղալիս հանդէս են գալիս իրենց հօր, մօր, վաճառորդի, ուսուցչի եւ բժշկի դերերում: Կազմակերպած խաղերի օգնութեամբ սովորում են հերթով խաղալ եւ իրենց գործողութիւնները համադրել միւսների գործողութիւնների հետ:

Անհատականութեան ձեւաւորում:

Խաղը պատճառ է լինում, որ երեխան ինքն իրենից դուրս գալ եւ իրեն տեսնի ուրիշի հայեացքով: Այսպիսով նա կերտում է իր ինքնուրոյնութիւնն ու անհատականութիւնը:

Ուրախ լինել: Փաստերը ցոյց են տալիս, որ բոլոր տարիքի առողջ երեխաները սիրում են խաղալ: Մանկավարժներն ու հոգեբանները համոզուած են, թէ որքան ժամանակ, որ երեխաները տրամադրում են խաղին, նոյնքան աւելի ուրախ են լինում բարձր տարիքում:

Ուրեմն խաղի կարեւորութիւնը նկատի ունենալով, ծնողները, որպէսզի կարողանան այդ գործօնը լաւագոյն օգտագործել իրենց զաւակների զարգացման ու դաստիարակման հարցում, ուստի անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել հետեւեալ կէտերին:

Պակսեցնել երեխաների հեռուստացոյց դիտելու ժամերը: Երեխաները ընդհանրապէս շատ ժամ են տրամադրում հեռուստացոյցին ու համակարգչային խաղերին, որոնք նրանց դարձնում են կոպիտ ու կուլարար, գոռոզ ու գիրուկ, ուստի եւ հարկաւոր է դրանց յատկացած ժամերը կրճատել եւ փոխարէնն աւելացնել բնական եւ օգտակար խաղերի ժամերը:

Չափից աւել երեխաների առօրեայ ծրագիրը չձանրաբեռնել զանազան դասարաններով ու լուրջ աշխատանքներով: Թոյլ տէք նրանց զբաղելու սովորական եւ օգտակար խաղերով, որպէսզի հոգեպէս ու ֆիզիկապէս առողջ մեծանան:

Հասարակ խաղալիքներ ընտրել երեխաների համար եւ թողէք փայտի, գնդակի, աւազի եւ նման այլ բաներով ու հասարակ խաղալիքներով զբաղեն, որպէսզի նրանց մէջ աճի ստեղծագործական ոգին:

Երեխաներին արկածախնդրութեան մղել. յատուկ ժամանակ յատկացրէք տնից դուրս խաղալուն, որպէսզի երեխաները կարողանան վազել, թռչկոտել, խաղալ եւ երեւակայել:

Նրանց խրախուսել մասնակցելու զանազան աշխատանքների, ինչպէս օրինակ՝ խոհարարութեան, աւտոլաւացման, որոնք նրանց համար խաղի տպաւորութիւն են թողնում: Թողէք նրանք երբեմն օգնեն տնային աշխատանքներում, որպէսզի աճի նրանց ստեղծագործական ընդունակութիւնը: Նրանք սիրում են կարճ ժամանակով օգնել իրենց մեծերին, ապա գնալ իրենց խաղի ետեւից:

«Յոյս»



Communities that vote are communities that government listens to. If we do not vote, our voices are not heard. If we want Armenians to have authority in how decisions are made involving our community, we must vote. Make your voice heard. Exercise your right. Register to vote today! Register to vote and make some phone calls for Khatchik Chahinian, who is running for Pasadena City Council - District 4. Together we can do it. **IMPORTANT VOTER DEADLINES TO REMEMBER:** Fri., Feb. 18: Last Day to Mail New Voter Registration Applications Tue., Feb. 22, 5PM: Last Day L.A. County Registrar accepts Walk-In New Voter Registration Wed., Jan. 12, 6:30 - 8:30PM: Pasadena Citywide Candidate Forum of City Council and School Board Location: La Salle High School, 3880 E. Sierra Madre Blvd., Pasadena Tue., March 8, 7AM - 8PM: Pasadena City Council and School Board Elections

massispost.com
daily news updates

ՍՏԵՊՂԻՆԸ՝ (ԳԱԶԱՐ) ՈՍԿԵ ԱՐՄԱՏ

Ըստ ժողովրդական ավանդույթի՝ օղակաձև կտրատած ստեպղինը դրամի, լիութեան, առողջութեան խորհրդանիշն է: Ստեպղինի հայրենիքը կարելի է համարել Շուկեցարիան: Բեռն քաղաքի մօտակայքում գտնուող լիճերից մէկում ափամերձ հինաուրց բնակավայրի շինութիւններու փլատակներում ժամանակին ստեպղինի սերմեր յայտնաբերուել են, որոնք ունէին աւելի քան 3000 տարուայ պատմութիւն: Որպէս մշակաբոյս՝ յայտնի է միջնադարէն: Ստեպղինի սերմերը պարունակում են էթերալին եւ ճարպալին իւղեր, ֆլավոնոիդներ:

Ճարպալիւղը պարունակում է օլեինալին, լինոլենալին եւ այլ թթուների գլիցերիդներ: Եթերալիւղերից առանձնացուել են ցիտրալը, կարատոլը, դաուկոլը, ագարոնը, ցինիոլը, ալֆապինեն սերպենները: Եթերալիւղերն ունեն այրող համ, ունակ են նօսրացնել, լուծել եւ լուանայ անօթների խցանումները: Այս առումով աւելի օգտակար են սերպենային իւղերը, որոնք գրեթէ չեն լուծուում ջրի մէջ: Կուտակուելով լեարդում, լեղապարկում, երիկամներում, միզապարկում գտնուող քարերի վրայ, սեպի պէս խրուում են նրանց մակերեսի վրայ գտնուող թէկուզ եւ աննշան ծաւալ ունեցող միկրոծաքերի մէջ: Քարերը սկսում են քայքայուել, իսկ սերպենային իւղը լուծուում է դրանց հետ: Ունի վառ արտայայտուած միզամուղ ազդեցութիւն:

Ստեպղինը խորհուրդ չի տրուում լեարդի եւ լեղապարկի հիւանդութիւնների դէպքում, որտեղ կիրառելի է եղինջի (այրող) խառնուրդը շաքարի հետ կամ տրորած սերմերը ջրով: Կարելի է օգտագործել մասուրը. 1 ճաշի գդալ մասուրը 10 րոպէ եռացնել 200 մլ լեռջրով, 2 ժամ թրմել:

Սեպտեմբեր - Հոկտեմբեր ամիսներին հաւաքել ստեպղինի սերմերը, սրճաղացով աղալ, խմել 1-ական գրամ, օրը 3 անգամ: Կամ 3 ճաշի գդալ սերմերին աւելացնել 3 գաւաթ եռջուր, գիշերը թրմել (փակ կափարիչով փաթաթած):

Խմել գոլ վիճակում, օրը 3 անգամ, 1-ական գաւաթ:

Լեղապարկի քարերը հեռացնելու նպատակով օգտագործելու դէպքում անհրաժեշտ է բժշկի հսկողութիւնը:

Խցանումներ կարող են առաջանալ:

Երիկամների կանխարգելիչ մաքրումը արդիւնաւէտ է ձմրանը: Օլեինաթթուն պատկանում է չլազեցած ճարպաթթուների շարքին: Հագուադէպ թթուներից է, որ պարունակում է կենդանական ճարպերում: Նշենք, որ մարդու ճարպը

հալչում է 150C, իսկ օլեինաթթուն 130C ջերմաստիճանում: Այս թթուն հեշտութեամբ ներծծուում է աղի քների կողմից եւ օգտագործուում նիւթափոխանակութեան ընթացքում:

Լուծում է խոլեստերինը, բարձրացնում արիւնատար անօթների ճկունութիւնը:

Ստեպղինը պարունակում է մեծ քանակութեամբ պետակարտին (գիշում է դոլոմին): Իւրացուելով օրգանիզմի կողմից՝ այն վերափոխուում է A վիտամինի: Այդ գործողութիւնն առաւել արդիւնաւէտ է, երբ, օրինակ, քերիչով անցկացրած ստեպղինը ուտում են ձիթապտղի իւղի հետ, քանի որ վերջինս 80% օլեինաթթու (արեւածաղկի իւղը՝ մօտ 40%) է պարունակում: Յատկապէս այս նիւթն է (ենթավիտամին A) բարելաւում տեսողութիւնը, կանոնաւորում նիւթափոխանակութիւնը, նպաստում օրգանիզմի աճին, ֆիզիքական զարգացմանը: Բջջանիւթի (A, B, C, D) պարունակութեան շնորհիւ, մաքրում են անօթները: Կալիումը, կալցիումը, ֆոսֆորը, երկաթը, ֆիտոցիդները կանխում են միջազգային հիւանդութիւնների զարգացումը: Ստեպղինի հիւթը եւ ստեպղինով պատրաստուած կերակրատեսակները օրգանիզմը ամրապնդող յատկութիւն ունեն: Մաքրում է արիւնը, օրգանիզմից հեռացնում է թթուները, վնասակար նիւթերը: Ստեպղինը յատկապէս օգտակար է ախտամիխողի, սակաւարիւնութեան ժամանակ: Կանխարգելում է շարորակ գոյացութիւններն ու ճարպակալումը: Ստեպղինը, ինչպէս եւ սեխը, ձմերուկը, դոլոմը, ծիրանը, դեղձը, խաղողը, լոլիկը, սպանախը, թրթնջուկը, ծնեբեկը նպաստում են մեկանիւնի արտադրմանը, որ ինչ-որ չափով պաշտպանում է մաշկը արեւայրուքներից: Ըստ 15-րդ դարի հայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու՝ ստեպղին եփուկի ջրով երեխայի ցրտահարուած ձեռքերն ու ոտքերը լուանալով կարող էք կանխել դրանց կապտելը: Իսկ վայրի ստեպղինի տերեւները հեռացնում են միջատներին: Ի դէպ, ստեպղինը մինչեւ 16-րդ դարի աւարտը եղել է մանուշակագոյն: Հոլանտացիներն ի պատիւ իշխանութեան գլուխ կանգնած դինաստիայի՝ նարնջագոյն արմատապտուղներ սկսեցին բուծել: Բետա-կարոտինը բնորոշում է ստեպղինի նարնջագոյն գունանիւթը:

Ստեպղինի ջերմային մշակման ենթարկելիս պահպանում է իր օգտակար յատկութիւնները: Կերակրատեսակների մէջ ստեպղինը հոյակապ գուգակցուում է տաւարի, ոչխարի մսի, կանաչ ոլոռի, դոմիկի, կարտոֆիլի, կիտրոնի, ցիտրուսների հետ:

ՄԱԿՆԵԶԻՈՒՄ, ՍԷԼԵՆԻՈՒՄ ԵՒ ԶԻՆԿ ՄԱԿՆԵԶԻՈՒՄ

ՄԱԿՆԵԶԻՈՒՄ

Այս հանքանիւթը անհրաժեշտ է կենսանիւթերու եւ հորմոններու գործունէութեան համար: Մարմինը զայն կը ստանայ ընդեղէններէ, պիտտակեղէնէ եւ չոր պտուղներէ: Ընկոյզ, նուշ, արեւածաղիկի եւ դոլոմի սերմեր, ձկնեղէն, պանան, կանաչ բանջարեղէններ, լման բրինձ, ցորեն, տուրմ եւ քաքաօ օգտագործելով, օրկանիզմը կը բաւարարէ մակնէզիումի իր պահանջը:

Մակնէզիումի անբաւարարութեան նշաններն են՝ մկանային դող, ցնցում, գլխացաւ-գլխապտոյտ, ընդհանուր յոգնութիւն եւ թուլութիւն, արեան գերճնշում եւ սրտի բաբախում:

Անոր աւելցուքէն կը յառաջանայ յարատեւ ծարաւի զգացում, ընդհանուր տկարացում եւ արեան ճնշումի նուազում:

ՍԷԼԵՆԻՈՒՄ

Ան սնունդ է ուղղղի համար եւ կը բարելաւէ տրամադրութիւնը:

ՄԱՆՏԱՐԻՆԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Յիտրուսային մրգերու մէջ ամենահաճելի գրեթէ մանտարինն է, որու կեղեւը հեշտութեամբ կը բաժուի ձեռքով:

Աշխարհի վրայ շատ մը տեղեր կ'աճեցնեն մանտարին, որովհետեւ բաւական ցրտադիմացկուն է, սակայն անոր իսկական հայրենիքը կը հանդիսանայ Չինաստանը:

Մանտարինը օգտակար է թոքերուն եւ կը թեթեւցնէ ասթման:

Մանտարինի կեղեւով կրնաք պատրաստել թուրմ, որ շատ լաւ ազդեցութիւն կը գործէ ցրտաուութեան ժամանակ, կը մեղմացնէ հազը եւ կը բարելաւէ ախորժակը:

Մանտարինի եթերաիւղը օգտակար միջոց է հոգեկան ընկճուածութեանն ազատուելու եւ տրամադրութիւնը բարձրացնելու համար: Այն օգտագործելի է գեղազիտական շատ տեսակի նիւթեր պատրաստելու, յատկապէս մաշկի

Սէլենիումի պակասը պատճառ կը դառնայ մկանացաւերու, քալցիում դժուարութեան, ջղային, յոգնած եւ անտրամադիր վիճակի:

Սէլենիում կը ստանանք ծովային ուտելիքներէն, հաւու լեարդէն, արեւածաղիկի կուտէն, պահածոյ թոնէն, ինչպէս նաեւ լոլիկ եւ պրոքտի սպառելով:

ԶԻՆԿ

Ան բարերար ազդեցութիւն ունի մորթի եւ եղունգներու վրայ: Կ'աշխուժացնէ սեռական գեղձերու աշխատանքը եւ կը բարձրացնէ մարմնի դիմադրողականութիւնը: Զինկով յատկապէս առատ են կարմիր եւ ձերմակ միսերը, հացահատիկները, ծովային ուտելիքները, դոլոմի կուտը, մութարտը, կաղամբը եւ ծաղկակաղամբը, գետնախնձորը, ճակնդեղը եւ հաւկիթի դեղնուցը: Զինկը անհրաժեշտ է նաեւ ենթաստամոքսային գեղձի հորմոնի՝ ինսուլինի ձեւաւորման համար:

Համար: Սակայն կան նաեւ հիւանդութիւններ, որոնց ընթացքին լաւ է այս պտուղէն օգտուիլ: Այն վնաս է այն մարդկանց, որոնք այլերժի ունին ընդհանրապէս ցիտրուսային պտուղներու նկատմամբ, կամ ստամոքսային, աղիքային անհանգստութիւններ ու խոցեր ունին եւ կամ թէ կը տուտային խոլեստերինն ու հեպատիտից:


Մանտարինի հիւթով կարելի է օգտուիլ որպէս դիմակ դէմքի մաշկը թարմ ու փայլուն դարձնելու համար: Այս նպատակով բամբակը թաթիւ մանտարինի հիւթին մէջ, ապա քսել դէմքին կամ թրջոցներ դնել եւ այդպէս թողնել մօտ 20 վայրկեան: Այնուհետեւ մաշկը մաքրել խոնաւ շորով եւ ապա չորցնել:

Այս դիմակը կարելի է օգտուիլ շաքաթական 2-3 անգամ, որ կու տայ ցանկալի արդիւնք:


ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave
 Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
 (626) 398-0506

833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու մայրագործքի բուժում:
 Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային եւ մկանային ցաւեր:
 Ինքնաշարժի վթարի հետեանցով պատճառած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
 (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
 1060 N. ALLEN AVE. PASADENA
 ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 55-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՅԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 1-ին

մէջ ծառայող հայ երեք յարանուանութեանց կրօնական առաջնորդներուն, քաղաքական երեք կուսակցութեանց ղեկավարներուն, հայ թէօտար մամուլի ներկայացուցիչներուն, Լիբանանի հայ գաղութի ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ Հայկազեանի շրջանաւարտներուն ու անոնց բարեկամներուն: Ասոնցմէ շատերը եկած էին հեռաւոր վայրերէ որպէսզի մասնակցէին տարեդարձի այս բացառիկ հանդիսութեան, ու վերջի շէին իրենց համալսարանական տարիները - Հայկազեանի այն օրերու համեստ շէնքը, ուսուցչական մարմինը եւ դասընկերները:

Յիշատակելի այս հանդիսութիւնը պատուած էին իրենց ներկայութեամբ նաեւ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս՝ Գրիգոր Յովհաննէսեանը որ ուսանած էր Հայկազեանի մէջ, Կլեմէնտի քաղաքապետ՝ Արա Նաճարեանն ու այլ երեւելի անձնաւորութիւններ, որոնք կը ներկայացնէին գաղութիս գանազան կազմակերպութիւնները:

Հանդիսութիւնը սկսաւ Կարգադիր Յանձնախումբի յամառատենապետ Ռաֆֆի Քէնտրիճեանի բարի գալուստի խօսքով: Ան կոչուողեց Հայկազեանի ամերիկաբնակ բոլոր շրջանաւարտներուն, որպէսզի կազմակերպեն Շրջանաւարտից Միութիւն մը՝ աստարելու Համալսարանին բարգաւաճման: Ապա ան հրաւիրեց հանդիսականները յոտնկալս ունկնդրելու Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի Հանրապետութեան ազգային քայլերգները՝ կատարողութեամբ Րաֆֆի Քեարպապեանի՝ ու դաշնակի ընկերակցութեամբ Եսթեր Ասիլեանի:

Բացման աղօթքը մատուցանեց Համալսարանի նախկին նախագահներէն Վեր. Ժիլպէր Պիլէզիկեան: Ապա հրաւիրուեցաւ Լեւոն Ֆիլեանը՝ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան վարիչ Քարտուղարը՝ իբրեւ հանդիսավար Ֆիլեան նախ իր ուրախութիւնները յայտնեց որ մեծ թիւով հանդիսականներ ներկայ էին մասնակցելու այս աննախընթաց անակատարութեան: Հաղորդել է ետք Հայ Աւետարանական Ընկերակցութեան ողջոյնները՝ Ֆիլեան շնորհակալութիւն յայտնեց Կարգադիր Յանձնախումբի անդամներուն որոնք ջանք չէին խնայած ծրագրելու այս բացառիկ հանդիսութիւնը:

Գեղարուեստական ընտիր յայտագրով մը հանդէս եկաւ գաղութիս սիրուած ու գնահատանքի արժանացած «էլըմընթ» նուագախումբը՝ որ ներկայացուց երաժշտական բարձրորակ յայտագիր մը՝ ինչ որ մեծապէս խանդավառեց բոլոր հանդիսականները, անխտիր:

Ճաշի սպասարկութենէն ետք՝ խօսք տրուեցաւ Համալսարանի նախագահին՝ Դոկտ. Փօլ Հայտոսթեանին: Հակիրճ անդրադարձ մը կատարելէ ետք Համալսարանին իրագործումներուն ու յառաջխաղացքին՝ ան պարզեց այս հանդիսութեան ետին կեցող նպատակներէն մէկը՝ որ էր հաստատումը հիմնադրամի մը՝ յօգուտ համալսարանի

ուսումնական ծրագիրներուն իրագործման: Ան իր սրտաբուխ շնորհակալութիւնը յայտնեց այս հաստատութեան վարդէմի ու նաեւ ներկայ բարերարներուն: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ ժրջան օժանդակ մարմիններուն՝ որոնք անսակարկ ու բոլորանուէր կերպով նեցուկ կը կանգնին Համալսարանին՝ ի խնդիր անոր գոյատեւումին ու յառաջխաղացքին:

Ապա հանդիսավար Լեւոն Ֆիլեանը բեմ հրաւիրեց օրուայ գլխաւոր բանախօս Դոկտ. Մանուկ Մանուկեանը: Ան ձեռնհասօրէն ծառայած է Հայկազեան Համալսարանին իբրեւ դասախօս գիտական նիւթերու: Արդարեւ իր նախաձեռնութեամբ եւ ջանքերով՝ Հայկազեանի գիտական կաճառը յաջողեցաւ հրթիռներ արձակել Տըպպայայի բարձրունքէն՝ հիացում առթելով Լիբանանեան մամուլին ու հանրութեան: Յիշատակութեան արժանի է նշել որ Դոկտ. Մանուկեանի ջանքերով հաստատուած է Հայագիտական Ուսումնասիրութեանց կեդրոն մը՝ Հարաւային Ֆլորիտա Համալսարանին մէջ, ուր ան գիտական նիւթերու դասախօս է 1968էն ի վեր:

55րդ տարեդարձի «Կարկանդակի Հատում»ին մասնակցեցան Համալսարանին այժմու եւ նախկին նախագահները: Հոսակ ապա հանդիսավար Պրն. Ֆիլեան յայտարարեց օրուայ մեծագոյն անակնկալը՝ Տէր եւ Տիկ. Ճօզէֆ եւ Ճօյս Սթայնի 55 հազար տոլարի իշխանական նուիրատուութիւնը, ի խնդիր Համալսարանի բարգաւաճման:

Իրենց «Սրտի խօսք»ը հաղորդեցին Հայ Կաթողիկէ Համայնքին Հոգեւոր Հովիւր՝ Հոգ. Արմենակ Վրդ. Պետրոսեան, էջմիածնական թեմէն՝ Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեան, (ներկայացուցիչ Առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանի), Անթիլիասական Թեմին Առաջնորդ Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Վարիչ Քարտուղար Վեր. Ճօզէֆ Մաթոսեան:

Հոսակ՝ Համալսարանին բարերարներէն Տիկ. Ճօյս Փիլիպոսեան՝ Սթայն բեմ հրաւիրեց օրուան մեծարեանը՝ Համալսարանի Հիմնադիր նախագահ Վեր. Դոկտ. Ճան Մարգարեանը, պարգեւատրուելու Կարգադիր Յանձնախումբին կողմէ: Մարգարեան՝ իր շնորհակալութեան խօսքին մէջ թարգման հանդիսացաւ ներկաներուն ուրախութեան զգացումներուն: Ապա ան մաղթանքներ ըրաւ ի խնդիր համալսարանին յաջողութեան ու ապագայի նորանոր նուաճումներուն:

Այս պահուն էր որ հանդիսավար Լեւոն Ֆիլեան հրաւիրեց Համալսարանի Լոս Անձելըսի Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամները որ պարգեւատրուին՝ իրենց աւելի քան կէս դար անխնայ ծառայութեան համար:

Հանդիսութեան փակման Օրհնութեան Աղօթքը մատուցելու համար Համալսարանի նախկին նախագահներէն Վեր. Դոկտ. Ճան Խանձեան հրաւիրեց բոլոր հոգեւորականները որպէսզի իրենց մասնակցութիւնը բերեն: Հանդիսութիւնը իր աւարտը գտաւ գոհունակութեան եւ երախտագիտութեան ընդհանուր մթնոլորտի մէջ:

ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ

Շարունակում է 8-ին

Գուշակեան այցի երթար Երուսաղէմ բերելու համար իր բարերար ազդեցութիւնը վանքին իրաւասութեանց եւ ներքին գործերու դասաւորումին մէջ: Գուշակեանի թելադրութիւնները տուին իրենց նախնական արդիւնքը, որ ինքնին հիացող մըն էր իր վաղեմի ուսուցչին Դուրեան Պատրիարքի, երբ միաբանութիւնը իր ակնարկը սեւեռեց Դուրեան Սրբազանի վրայ, որ անպաշտօն կը մնար Կ. Պոլիս տասնամեակէ մը ի վեր, եւ 1918 թուին նախագահած էր վախճանեալ Մաղաքիա Պատրիարք Օրանեանի յուղարկաւորութեան՝ ի բացակայութեան աքտրեալ Զաւէն Պատրիարքի: Զաւէն Պատրիարք Կ. Պոլիս իր պաշտօնին վերադարձաւ երեքուկէս տարի ետք՝ 1919 Փետր. 19-ին:

Երուսաղէմի հոգատար կառավարութիւնը այլեւս պիտի չարտօնէր Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան կողմէ կատարուած Երուսաղէմի պատրիարքի ընտրութեան իրաւունքն ու կերպը, քանի որ Սահմանադրական ձեւը այլեւս խանգարուած էր եւ անգործադրելի, նկատի ունենալով անշուշտ Օսմանեան տիրապետութեան չգոյութիւնը Պաղեստինի վրայ: Փոխարէն Բրիտանական կառավարութիւնն էր որ պիտի վաւերացնէր Երուսաղէմի հայոց պատրիարքին ընտրութիւնը: Սակայն որպէսզի կարենային յաջողցնել Եղիշէ Արքեպս. Դուրեանի անյապաղ ընտրութիւնը, Ազգային Ժողովը ընդարձակ տեղեկագիր մը ներկայացուց Բրիտանիոյ հոգատար իշխանութեանց ինդրելով որ «այս անգամ եւս», վերջին անգամն ըլլալով, արտօնէր ընտրութիւնը Ազգային Սահմանադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը վաւերացուէր Անգլիոյ Թագաւորէն:

Ստանալով հարկ եղած արտօնութիւնը, Կ. Պոլսոյ մայր եկեղեցւոյ մէջ 1921 Սեպտեմբեր 5-ին գումարուեցաւ յատուկ նիստ եւ 68 ներկաներու 62-ի քուէներով Երուսաղէմի պատրիարք ընտրուեցաւ Եղիշէ նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ, եւ նոյն թուի Նոյեմբերի 7-ին կատարուեցաւ գահակալութիւնը յԱթոռ Առաքելական Երուսաղէմի Անգլիոյ Թագաւորին հրովարտակը ստացուելէն ետք:

Դուրեան Պատրիարքի Վաստակը

Դուրեան Պատրիարքի գրական վաստակը գերազանց եղած է իր վարչական գործին բարդատմամբ: Գրաբար լեզուի «Ընթացք»էն ետք, ան շուտով հրատակարեց

նաեւ իր «Պատմութիւն Հայ Մատենագրութեան» դասագիրքը՝ երեք բաժիններով (անգիր շրջանի Գողթան Երգեր, Միջին Մատենագրութիւն, Նոր Մատենագրութիւն), «Ընտիր Ասացուածք Օտարագրի Ականաւոր Անձանց» կենսագրական հատորը, «Բառագիտութիւն կամ ութ մասունք բանի հայերէն քերականութեան» հատորը: Աւելի ուշ հրատարակուեցան բանաստեղծ եւ արձակագիր Դուրեանի Պատրիարքի «Հովուական Սրինգ»ը, «Մշակն ու Վարձքը», եւ «Սրբազան Քնար» բանաստեղծութեանց հատորը: Հոյակապ գրութիւններ եղան իր «Խաչը» եւ «Ս. Մեսրոպի ԱԲԳ-ի Դասը»:

Հայ Երուսաղէմ վերագործնք ապրեցաւ Դուրեան Պատրիարքի իննամեայ գահակալութեան շրջանին երբ ինք «Արմաշէն Երուսաղէմ եկաւ» իր լիաբուռն իմաստով՝ Արմաշը Երուսաղէմ փոխադրելով, ուր «սուրբ վրէժիւնդութիւն» կատարելու սրբազան գործին ձեռնարկեց, իր իսկ բացատրութեամբ: Իր հրաւերով Երուսաղէմ փութաց Արմաշական անդրանիկ սան Բաբգէն Եպիսկոպոս Կիւլիսէրեան ուսուցչապետի հանգամանքով, եւ ինչպէս Թորգոմ Եպս. Գուշակեան ըսեր էր այն ատեն: «Դուրեան, Դպրեմանքի մեր վաստակաւորը, առանց այդ անունին՝ միեւնոյն հաստատութիւնն էր որ կը փոխադրէր այդ օր Հայ Երուսաղէմի պարիսպներէն ներս»:


Դուրեան Պատրիարքի ձեռքով հոյ մը նուիրեալ հոգեւորականներ ձեռնադրուեցան Երուսաղէմի մէջ՝ Տրդատ Պէրպէրեան, Յովհաննէս Մանտաճեան, Կիւրեղ Իսրայէլեան (յետագային Պատրիարք), Մամբրէ Գալֆայեան (յետագային Առաջնորդ Ամերիկայի թեմերուն), Նորայր Պողարեան (ներհուն բանասէր եւ ձեռագրագետ, եւ Տիրան Ներսոյեան (յետագային Առաջնորդ Ամերիկայի թեմին եւ ընտրեալ Պատրիարք Երուսաղէմի): Իսկ իր ձեռնասուն սարկաւազները, թիւով ինը, ինք իր ձեռքով պիտի ձեռնադրէր եւ օծէր 1930 թուականին, երբ վերահաս վախճանը վրայ հասաւ նոյն տարուոյ սկիզբը, թիւը հասցնելով 15-ի: Դուրեան Արմաշի մէջ ձեռնադրած էր 14 հոգեւորականներ որոնց վրայ հայոց կրած ցեղասպանութենէն ետք կ'աւելնային վերելի 15-ը, լրացնելով պատկառելի թիւ մը 29 հոգեւորականներու՝ փառքն ու պսակը կազմելով երախտաշատ Պատրիարքին:

Դուրեան Եղիշէ Պատրիարք կը վախճանէր Երուսաղէմի իր բնակարանին մէջ 1930 թուի Ապրիլի 27-ին յետ կարճատեւ հիւանդութեան 70 տարիքը լրացուցած:

Հրապարակի վրայ է

«Յուշերու Բագին»
 հեղինակ՝
 Արմէն Ղաթիպ
 (տպ. Պէյրուք 2009)
 Գինը՝ \$20

Ստանալու համար դիմել
«Մասիս» Շարաքաթերթին
 1060 N Allen Ave
 Pasadena, CA 91104
 626-797-7680



ՐԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՓԱՌԱՏՕՆ

Շարունակում է 8-էն

կական ճաշերն ու համով հայկական պանիրն ու լաւաշը եւ յատուկ պատրաստուած Ղաբամաններն էին...

Այո՛ իսկական հայկական փառասուն, վարժարանէն ներս խանդավառութիւն կը տիրէր, ամէն կողմ լեցուն էր ծնողներով, աշակերտներով, ուսուցիչներով, որոնք բոլորը հագուած էին վարժարանի 25 ամեակի նշանակը կրող յատուկ պատրաստուած շապիկներ, եկած էին նաեւ շրջանաւարտ աշակերտներ, որոնք մեծ կարօտով վերադարձեր էին եւ արդէն հին օրերու մտերմութեամբ կը վարուէին:

Յաջողեցաւ Հայկական բաժանմունքի ծրագիրը, յամառ աշխատանքով եւ զօրակցութեամբ տնօրէնութեան, նախակրթարանի եւ մանկապարտէզի ծնողաօժանդակ մարմիններու, դասարաններու պատասխանատու ծնողներուն, բոլոր ուսուցիչներուն եւ աշակերտներուն, որոնք մեծ բծախնդրութիւն ցուցաբերեցին իրենց վստահուած բաժինները կատարեալ ներկայացնելու, գիտակցելով որ այս տարի հանդիսատեսը միայն աշակերտներ չէին այլ ծնողներ, հիւրեր, մեծ ծնողներ, նախկին աշակերտներ եւ մեծ բազմութիւն: Հոս անհրաժեշտ է շնորհակալութիւն յայտնել բոլոր զօրակցողներուն, որոնք քաջալերեցին նիւթապէս, բարոյապէս, աշխատանքով եւ ներկայութեամբ, անգամ մը եւս փաստելով իրենց հաւատքը հայ մշակուցի անհրաժեշտութեան եւ հայ դպրոցի առաքելութեան հանդէպ:

Այս խանդավառ մթնոլորտի մէջ, հեզասահ ընթացաւ նաեւ օրուան պաշտօնական բաժինը իր բազմազան յայտագրով, ուր բեմ բարձրացան դպրոցի նոյնիսկ մանկամտերի աշակերտները, հերթով բոլոր դասարանները ներկայացան եւ իրենց բաժինները ներկայացուցին, երկար յայտագիրը հերթափոխութեամբ կատարուեցաւ, ծնողներ հաճոյքով կը դիտէին իրենց գաւակներու ներկայացումները, ապա կը շարունակէին իրենց հաճոյքը՝ մասնակցելով սրահէն դուրս տեղի ունեցող խաղերուն եւ այլ յայտագրերու, իրենց տեղը տալով նոր եկողներուն, եւ այսպիսով բոլորը վայելեցին իրենց հրամցուածները հաւասարապէս:

Հանդիսութեան տեւողութեան յայտագրի բոլոր մասերուն՝ թատրոն, երաժշտութիւն թէ ասմունք իր հմտութեամբ դաշնամուրով կ'ընկերակցէր վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի՝ Տիկ. Վարդուհի Պաղտասարեան, իսկ օրուան հանդիսավարն էր վարժարանիս հայերէն լեզուի ուսուցչուհի Տիկ. Լինտա Գանտիլեան, որ բացման խօսքով բարձրատական եզր մը գծեց ուսուցչի եւ մշակի զգացած գոհունակութեան միջեւ՝ ի տես իրենց ձեռնակերտը եղող հասուն «բերքին», ապա Տիկ. Լինտա երկու ժամ անընդհատ ներկայացուց աշակերտները եւ խօսեցաւ անոնց ներկայացուցած հայ մշակուցի բնագաւառներու մասին: Արդարեւ հանդիսութիւնը ունէր քանի մը մասեր՝

Առաջին բաժնով ներկայացան մանկապարտէզի աշակերտները, երգելով եւ արտասանելով հայրենաշունչ երգեր ու ոտանաւորներ, ապա իրենց ծնողներուն հետ բաժնուեցան սրահէն եւ միացան իրենց համար յատուկ պատրաստուած խաղերու բաժնին ապրելով անմոռանալի օր մը:

Յաջորդ բաժնով հանդէս եկան նախակրթարանի աշակերտները, դարձեալ երգելով պարերով, ներկայացումով եւ հայկական տարագներու ցուցադրութեամբ: Այս տարուան նորութիւնն էր տարագներու ցուցադրութիւնը, որ պատրաստեց Տիկ. Մարօ Գուլումճեան չորրորդ եւ հինգերորդ դասարանի աշակերտներուն համար, ընդգրկեց հայոց պատմութեան 1900էն մինչեւ Արցախեան նորագոյն պայքարը եւ ներկայացուց պատմական յատկանշական դէմքեր:

Վերջին բաժնէն առաջ, խօսք առաւ վարժարանիս տնօրէնուհի քոյր Լուսիա, որ աշակերտները յորդորեց հայկական մշակուցի լիցքաւորելու եւ քաջալերեց գանձեր իրենց տարած աշխատանքին համար: Քոյր Լուսիա իր խօսքի աւարտին յատուկ կերպով շնորհաւորեց հայերէն լեզուի դասատուները, երաժշտութեան ուսուցչուհին եւ շնորհակալութիւն յայտնեց կատարած ազգանուէր աշխատանքին համար, մինչ ներկաները ծափողոյններով եւ ծաղկեփունջերով իրենց երախտագիտութիւնը յայտնեցին ուսուցչուհիներուն:

Ապա տեղի ունեցաւ ՀՕՄԻ Հարիւրամեակի Հիմնադրամի Յանձնախումբի կազմակերպած Շարագրութեան մրցումին մասնակցող եւ մրցանակի արժանացող աշակերտներու պարգեւատրումը ձեռամբ Յանձնախումբի անդամներէն՝ Լինտա Գանտիլեանի: Յիշենք որ այս մրցումին ընդհանուր վարժարաններու մէջ եօթերորդ կարգերու մակարդակին վարժարանէս Ալէք Քիլիսեան արժանացաւ երրորդութեան իսկ ներքին վարժարանի մակարդակով վեցերորդ դասարանէն Ամելի Թէյչըր առաջին, իսկ եօթերորդ դասարանէն Ալէք Քիլիսեան առաջին, Գէորգ Արապեան երկրորդ, վեր-

ջապէս ութերորդ դասարանէն Մարինա Սթանպուլեան առաջին:

Հանդիսութեան վերջին բաժինը ստանձնած էր վարժարանի միջնակարգ բաժինը, անոնք երգելու եւ արտասանելու կողքին ութերորդ դասարանի աշակերտները ներկայացուցին «Քաջ Նազար», թատրերգութիւնը: Գնահատելի էին բոլոր աշակերտները, անոնք շատ մեծ ապրումով եւ շատ բնական կատարեցին իրենց բաժինները, սակայն Արին Շահճադանեան բացառիկ էր, ան ճարտարութեամբ ներկայացուց Նազարի տիպարը՝ ներկաներուն պարգեւելով հաճոյքի երկար պահեր: Թատրերգ աւարտեցաւ Նազարի հարսանիքով, որ վերածուեցաւ հայկական հարսանիքի երբ աշակերտական խումբ մը ձեռքերնին Ղաբամա մեկնաբանեցին «Ղաբամա» երգը թմբուկով ու տաբով, Նազարն ու իր հարսնուորները հրաւիրելով պարի, մինչ աշակերտները ուղղուեցան դէպի բակ ներկաները միացան իրենց, իսկ այս օրուան առիթով յատուկ հրաւիրուած պարուստացներ՝ Պրն. Մարօ եւ Տիկ. Տալիլա Բանտագօս գլխաւորեցին հայկական շուրջպարը, որ ծայր առաւ եւ շարունակուեցան մինչեւ ուշ ժամեր, մթնոլորտը վերածելով իրական հայկական հարսանիքի:

Խորախոսիչ էր լրիւ ամսուան ձեռնարկները՝ Մանկապարտէզի համար կատարողութեամբ Տիկ. Մարօ Գուլումճեանի, Հայկական ճաշերու ներկայացում՝ միջնակարգի բաժին եւ տակաւին նմանօրինակ ծրագիրներ, որ հայ վարժարանը կը պահէ իր առաքելութեան մէջ եւ հայ ուսուցիչը պատնէշի վրայ, հաւատարմով որ հայ մշակուցի «Տունն է հայուն աշխարհի չորս ծագերուն», կ'աշխատի զայն անաղարտ պահել, պահպանել եւ որպէս մասունք բաժնել եւ հասցնել ամէն հայ մտքի ու հոգիի մասնաւանդ մատղաշ հոգիներուն ու մտքերուն մէջ զայն դրոշմել:

Շարունակէ առաքելութիւնը Հայ Մշակի տիրուս աշխարհի, որ կանգուն մնայ հայ ազգն ու հայրենիքը:

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1702
EXTERIOR PAINTING OF BUILDINGS AT MAR VISTA GARDENS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for the exterior painting located at Mar Vista Gardens, 11965 Allin Street, Culver City, CA 90230. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd Floor, Los Angeles, CA 90057 until 1:00 p.m. (local time), November 24, 2010.

INVITATION FOR BIDS (IFB) No. 1703
EXTERIOR PAINTING OF BUILDINGS AT NICKERSON GARDENS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Exterior Painting located at Nickerson Gardens, 1590 East 114th Street., Los Angeles, CA 90059. . Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd Floor, Los Angeles, CA 90057 until 1:30 p.m. (local time), November 24, 2010.

11/11, 11/18/10
 CNS-1978940#
 MASSIS WEEKLY

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1704
THE LEAD-BASE PAINT ABATEMENT AT MAR VISTA GARDENS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Lead-Base Paint Abatement located at Mar Vista Gardens, 11965 Allin Street, Culver City, CA 90230. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd Floor, Los Angeles, CA 90057 until 2:00 p.m. (local time), November 24, 2010.

INVITATION FOR BIDS (IFB) No. 1705
THE LEAD-BASE PAINT ABATEMENT AT NICKERSON GARDENS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Lead-Base Paint Abatement located at Nickerson Gardens, 1590 East 114th Street, Los Angeles, CA 90059. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd Floor, Los Angeles, CA 90057 until 2:30 p.m. (local time), November 24, 2010.

11/11, 11/18/10
 CNS-1978977#
 MASSIS WEEKLY

BURBANK AIRPORT

BID REQUEST

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E10-31, Module 12.6 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, December 22, 2010. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for 30 Single Family residences. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for December 2, 2010, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863

massis2@earthlink.net

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍԸ ԹՈՐԵԱԼ ԶՈՒՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՒ ԱՆՄՇԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՈՌՈԳՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐԻ ԱՌԱՋ

Շարունակում է 1-էն

կողմին, առկայ էր այլ հիմնական տազմապ մը, որ կապ ունէր գիւղացիներու ապրուստի հոգացման հետ:

Անմշակ կը մնային աւելի քան հարիւր հազար էֆր տարածութիւն ունեցող խոպան հողատարածքներ, ռոտգիչ ջուրի չգոյութեան պատճառաւ: Գիւղատնտեսութեան շարժիչ ուժը համարուող ռոտգոյ ջուրի չգոյութեան պատճառաւ, հայ գիւղացին կը գրկուէր ցանքու քերֆէ, երեսոյթ՝ որ գիւղացին կը գրկէր երկրագործական հասոյթէ:

Այս ողորմելի կացութեան դուրս գալու առաջադրանքով, Հայաստան Համահայկական Հիմնադրամը յառաջ կը մղէ ծրագիր մը, որ գիւղերու սահմանամերձ սարերու աղբիւրներուն մօտ պէտքէ կառուցուէին ջրամբարներ եւ մաքրման կայաններ: Այս կայաններէն մաքրուած ջուրը ինքնահոս խողովակներու միջոցաւ պիտի ամբարնական զիւղէն ներս գործող կեդրոնական ջրամբարի, մաքրման եւ ննջման կարգաւորիչ կայաններու մէջ: Նոր կառուցուած խողովակաշարի ներքին ցանցով մաքրուած ջուրը պիտի հասնէր գիւղացիին տունը, այս կերպով ապահովելով խմելու եւ ռոտգման ջուրը:

Շուտով դիտելի պիտի ուզէինք տալ, որ Հայաստան Համահայկական Հիմնադրամի նախաձեռնած ներկայ ծրագիրը ունի յստակ, գործնական եւ օգտաշատ գործընթաց մը, որ ոգեւորիչ է: Տարակոյս չկայ, որ անգամ մը, որ ջրամբարները, մաքրման կայանները կառուցուին եւ ննջման կարգաւորիչ կայանէն տուն առ տուն արձակուող ջուրի խողովակաշարերը խմելու ռոտգման ջուրը կը հասցնեն հայ գիւղացիին բնակարանը՝ ապա նոյն այն գիւղացին պիտի սկսէր իր ցանք ու քերֆի աշխատանքին, իր իսկ բազուկի օգտագործման, շրջանի արդիւնաբերական գործունէութեան, յօգուտ իր ընտանիքին տնտեսութեան քարելուման, գիւղի կեանքի պայմաններուն քարելուման, յառաջընթացին, քարեզարդման ու հայրենիքին՝ Արցախ աշխարհի ինքնապաշտպանութեան առաւել հզօրացման:

Արդարեւ, խիստ զնահատելի, խոստումնալից եւ կառուցողական

նախաձեռնութիւն մըն է Հայաստան Համահայկական Հիմնադրամի մշակած ծրագիրը, որ յաջողութեամբ պէտքէ պսակուի ամէն գնով եւ ամենէն կարն ժամանակի մէջ:

Թորեալ խմելիք ջուրի մշտական մատակարարումը եւ խոպան, անջրդի արտերը ռոտգելու մնայուն ապահովութիւնը երաշխիք են նոր գարբօնի: Անոնք, Թորեալ խմելիք ջուրի մշտական մատակարարումը եւ խոպան անջրդի արտերը ռոտգելու մնայուն ապահովութիւնը կոչուած են, նաեւ՝ վերականգնելու հայ գիւղացիի բարոյական կորույթը, աշխատանքի եռանդը, արդիւնաւորելու իր երկրագործական փորձառութիւնը: Անոնք կոչուած են դուրս քերելու հայ գիւղացին իր ջղասպառ սպասողական հիւանդագին վիճակէն, փրկելու զինք իր վիատեցուցիչ անգործունեայ կացութենէն: Տարակոյս չկայ, որ Հայաստան Համահայկական Հիմնադրամի՝ աւելի քան երկու հարիւր գիւղերը աշխատանքի մղելու կոչուած իր ծրագրի յաջողութեան նիւթապէս, բարոյապէս եւ գործնապէս օրափոխ պիտի կանգնի մէն մի հայրենասէր հայ մարդ, ուր ալ գտնուելու ըլլայ ան աշխարհի չորս ցամաքամասերուն վրայ: Այս խոր գիտակցութեամբ, բարձր տրամադրութեամբ եւ ջերմագոյն հայրենասիրութեամբ պիտի դիմաւորուի 25 Նոյեմբեր 2010-ին, նման ամէն տարիներուն, տեղի ունեցող Գոհաբանութեան տօնական օրուան զուգարկապող Հայաստան Համահայկական Հիմնադրամի կազմակերպած Թեւեթոնը, որ եզակի նշանակութիւն ունի, ինչպէս դիտել տուինք մեր յօդուածի սկիզբը:

Կը հաւատանք, որ այս տարի, ծրագրով եԶԱԿԻ նշանակութիւն ունեցող Արցախ աշխարհի սահմանային լիուած 200 գիւղերուն վերականգնումին եւ անոնց 70 հազար բնակիչներու կեանքի պայմաններու բարելուման նուիրուած 25 Նոյեմբեր 2010-թ. թեւեթոնային դրամահաւաքը պիտի արձանագրէ եԶԱԿԻ յաջողութիւն, շնորհիւ որուն, շուտով 200 գիւղի 70 հազար բնակիչ պիտի ունենայ մաքուր ջուր, խմելու համար, եւ ռոտգման ջուրի չգոյութեամբ 100 հազար էֆր անմշակ հողատարածք՝ մշտական ռոտգում:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԻՆՏԵՆՍԻՎԱՐԱԹՈՆԻ ԱՌԹԻ

Շարունակում է 6-էն

կոնգրեսի վրայ, քանի դեռ հայ-թրքական բանակցութիւնները ընթացքի մէջ են: Որքանով է ճիշտ այդ լուրը չգիտեմ, սակայն այն խառնաշփոթ ստեղծեց հայութեան մէջ: Սփիւռքի գոյութիւնը պայծառ նաւորուած է նաեւ միջազգային հանրութեանը Հայերի ցեղասպանութիւնը ճանաչելի դարձնելու պայքարով, սակայն ըստ բացառապատուած գաղտնի տեսագրութեան, Հայաստանի նախագահը գաղտնի գործարք է կնքում ԱՄՆ-ի փոխնախագահին հետ Հայերի ցեղասպանութեան հարցով: Միւս կողմից էլ Սփիւռքի նախարարութիւնը յայտարարութիւններ է կատարում ներգաղթի մասին, երբ Հայաստանի ժողովրդի սոցիալ-տնտեսական պայմանները նախանձելի վիճակում չեն:

Հեռուստամարաթոնը կատարուած է հիմնականում Արցախի եւ մասամբ էլ Հայաստանի սոցիալ-տնտեսական կարիքները հոգալու համար, բայց Արցախի շատ գիւղերում այսօր միայն մեծահասակներ են մնացել: Երիտասարդութիւնը լքում է հայրենի գիւղն ու իր կեանքը կապում քաղաքի հետ: Արցախի հայաթափման գործընթացին նպաստում են նաեւ Հայաստանի կառավարութեան արցախցի դեկավարները, Երեւան բերելով իրենց գերդաստաններին ու չմտածելով Արցախի ապագայի մասին: Այսօր համարեա բնակչութիւն չկայ Արցախի սահմանամերձ գիւղերում: Եթէ բնակչութիւն չկայ, ո՞վ է տէր կանգնելու հայրենի հողին ու ունեցուցքին...: Կարծում ենք, որ Հայաստանի կառավարութիւնը ժամանակին մեծ սխալ թող տուեց՝ Երեւանի արցախցի փախստականներին չստիպեց վերադառնալ Արցախ:

Հայաստանում անընդհատ յայտարարում է, որ Արցախն ու Հայաստանն ունեն հօր բանակներ: Դա անհրաժեշտ, բայց բաւարար պայման չէ անվտանգութեան համար: Այդ բանակներին թիկունք է

պէտք: Եթէ Աստուած չանի պատերազմ սկսուի, ո՞վ պիտի ապահովի բանակի մատակարարումը, երբ գիւղերում բնակչութիւն չկայ:

«Հայաստան» հիմնադրամի օգնութեամբ կառուցուած Արցախի գիւղերն իրար կապող ճանապարհները, Գորիս-Ստեփանակերտ ռազմաքաղաքական եւ տնտեսական մեծ նշանակութիւն ունեցող մայրուղին ու այլ կառուցներ, Արցախի գիւղերի զարգացման համար հիանալի պայմաններ են ստեղծում: Ուստի անյապաղ պէտք է բնակեցնել դատարկ գիւղերը եւ ազատագրուած տարածքները, որի համար շատ ենք ուշացել: Պետութիւնը կամ երկիրը ժողովրդի թուաքանակով է հօր, եթէ բաւարար ժողովուրդ չկայ, միայն բանակը բաւարար չէ երկրի սահմաններն ապահով պահելու համար:

Սփիւռքն աշխատում է բոլոր հնարաւոր նիջոցներով օգնել հայրենիքին, այդ թւում նուիրատուութիւններով «Հայաստան» հիմնադրամին, որպէսզի հայրենիքը արագ ոտքի կանգնի: Նա պէտք է շարունակի իր օգնութիւնը բոլոր ապարիչներում, որպէսզի բարելաւուի Հայաստանի հայի սոցիալ-տնտեսական պայմանները եւ վերջինս մոռանայ արտագաղթելու մասին: Իսկ Հիմնադրամի գրասենեակները պէտք է համալրուեն ազգասէր ու բանիմաց աշխատողներով:

Հաւատում ենք «Հայաստան» հիմնադրամի հեռուստամարաթոնի յաջողութեանը, որ կը սատարի նաեւ հայութեան համախմբանը, իսկ հիմնադրամի միջոցով 2011 թ. կը շարունակուի տնտեսական զարգացումներն Արցախում ու Հայաստանում խաղաղ պայմաններում:

Յաջողութիւն մաղթելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի Նոյեմբերին կայանալիք հեռուստամարաթոնին, չոչտով ենք նաեւ, որ վերոնշեալ հարցերն ուշադրութեան կ'արժանան Հայաստանի համապատասխան գերատեսչութիւնների կողմից:



ԱՆՂԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան «Սապահ Կիւլ» մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 24 Նոյեմբեր 2010ին, Երեկոյեան ժամը 8ին, Կլենտէյլի կեդրոնին մէջ:
Ծանօթ. Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:
Ներքին Դիւան

ՇՆՈՐԱԿՈՐԱՆԵՐ

ՕՐ. ԱԼԻՍ ԹԱԻՈՒՔՃԵԱՆ ԵՒ ՊՐՆ. ՃՈՐՃ ՊԱԹԹԱ
Ամուսնացեալք, 13 Նոյեմբեր, 2010 Մոնթեպելլօ
«Մասիս» կը շնորհաւորէ նորապսկաները եւ կը խնդակցի իրենց ծնողներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուքճեանին:

ՅԱՄԱԿՑԱԿԱՆ

ԱՐՓԻՆԷ ԱՆՈՒՇԵԱՆԻ մահուան տխուր աւիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կը ցաւակցի հանգուցեալի զաւակներուն, մերձաւորներուն եւ մասնաւորաբար Մանկրեան եւ Թաթուլեան ընտանիքներուն:

ՄԱՍԻՍ **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.

Armenia Fund & Karoun Dairies Present


1st Annual Benefit Concert

ArmeniaFund

All Proceeds to Benefit Armenia Fund Telethon 2010 Water Projects

Sunday, November 21, 2010 | 7:30PM

Sofi
Mkheyan



Eva
Rivas

WATER IS LIFE



Andre



Razmik
Amyan



Students of the Armenian State Theater of Song
Musical Director

Artur Grigoryan

Masters of Ceremony
Hrant Tokhatyan & Anita Hakhhverdyan



Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA 91101

ticketmaster

Tickets start at \$30

For Tickets
Call 1-818-265-0506 or 1-800-888-8897
or log on to www.ticketmaster.com